ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

# ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (180)

#12 դեկտեմբեր 2020

# ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

## «ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի հոբելյանական 15-րդ տարին



Ալինա Փահլևանյան (1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ), Էդվարդ Միրզոյան (1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ), Տ. Նավասարդ արքեպս. Կճոյան, Սերգեյ Սարաջյան (ԵՊԿ ռեկտոր, «ԵՊԿ հրատարակչության» նախագահ 2004-ից)

Քրիստափոր Փախանյան (ռուս. տեքստերի խմբագիր), Տիրան Լոքմագյոզյան (հյուր, հեղինակ, կոմիտասագետ, երգիչ, թուրքագետ), Արթուր Ավանեսով (2000-2006 թթ.՝ անգլ., լեզուների թարգմանիչ, խմբագիր), Վահան Խաչատրյան (Հայաստանի հրատարակիչների միջազգային ասոցիացիայի նախագահ այժմ՝ գործադիր տնօրեն), Վալենտին Թովմասյան (2001-2017 թթ.՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար, 2005-2012 թթ., ԵՊԿ հրատ. բաժնի վարիչ), Իրինա Տիգրանովա (1996-ից ստեղծման ակունքներից խորհրդատու և 1998-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ), Գոհար Շագոյան (1996-ից՝ հիմնադիր-գլխավոր խմբագիր, 2004-ից՝ «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչ-տնօրեն, «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր-թողարկման պատասխանատու՝ 2005-ից), Սուսաննա Ղուկասյան (2005-2012 թթ., «ԵՊԿ հրատարակչության» համակարգչային օպերատոր), Հովհաննես Մուրադյան (2004-2018 թթ.՝ հայերեն տեքստերի խմբագիր, սրբագրիչ), Հրանտ Խաչիկյան (2006-2011 թթ.՝ անգլ. խմբագիր, ԵՊԿ դասախոս, երգիչ), Սոֆա Ազնաուրյան (2000-ից առ այսօր՝ ռուս. տեքստերի խմբագիր, կոմպոզիտոր),

Մարիամ Ասատրյան (նոտային տեքստերի խմբագիր 2006-2011 թթ.՝ ԵՊԿ ինֆորմատիկայի դասախոս), Նունե Սամվելյան (2000-2012 թթ.՝ «ԵՊԿ հրատարակչության» դիզայներ, նաև Ազգային գրադարանի համակարգչային բաժնի վարիչ), Եվա Կոչիկյան (ԵՊԿ ռուս. լեզվի թարգմանիչ խմբագիր), «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր, երաժշտագետ Աննա Գևորգյան,

«Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման առիթով օրհնությունը՝

Տ. Նավասարդ արքեպս. Կճոյանի,

«ԵՊԿ հրատարակչություն», փետրվար, 2006 թ.

ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՄՍԱԳԻՐ
«ԵՐԱԺԻՇՏ» ԱՄՍԱԹԵՐԹ

*Սիրելի կոմիպասականնե՛ր*

*Ձեր ջանադիր ուժերով հասպապված «ԵՊԿ հրապարակչություն»ը, «Երաժշպական Հայասպան» ամսագիրը և «Երաժիշպ» ամսաթերթը՝ որպես Կոմիպաս Վարդապեպի անունը արժանավայել կրող հասպապության խոսափողներ, այսօր մեծ գործ են կապարում ազգային անարապ մշակույթի լույսը սփռելու համար:*

*Ներկայումս իրական է կեղծ արժեքների նորամուտ հոսանքի վպանգը, որը սպառնում է իր հորձանքի մեջ առնել ազգայինն ու ավանդականը, խոպորել երիպասարդության հոգևոր ուղին: Դուք, խոսքի ուժով, երաժշպական կրթության ու դասփիարակության միջոցով զրակցում եք նրանց, հարսպացնում ձեր ընթերցողների հոգեմպավոր աշխարհը:*

*«Բարբառ փողեցէ՛ք ի սիրտ մղչկեալ նոր աղաղակի» (Խոսք հնչեցրե՛ք փագնապած սրպերի համար նոր կանչով),- Նարեկա վանքի ճգնավորի՝ սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթախոս փողերին ականջալուր՝ նորովի հնչեցրե՛ք ձեր խոսքը, հասպապապես նվաճե՛ք ընթերցողների սրպերը:*

*Ջերմագին սիրով և օրհնությամբ՝*

Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

*14.մարտի 2006 թ.*

Շնորհավորանները «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման առիթով 2005 թվականին 2

Շնորհավորանքներ «Երաժիշտ» ամսաթերթի անցած ուղու 5-ամյակի առթիվ 3

Շնորհավորանքներ «Երաժիշտ» ամսաթերթի ստեղծման 10-ամյակի առթիվ 4

«Երաժիշտ» ամսաթերթի կարևորությունն արժեվորած անվանի երաժիշտների մաղթանքները 5

«Երաժիշտ» ամսաթերթը 15 տարեկան է 6

«Երաժիշտ» ամսաթերթն ստեղծման օրվանից մինչ այսօր 8

Կատակում են երաժիշտները 12

Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվում 13

Իրանահայ երաժիշտները «Երաժիշտ» 8(21)2007թ. 14

Издано в Степанакерте: в дар библиотеке и “Издательству ЕГК” 16

## ԳՈՌ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ հիշատակի նվիրումի հանդիպում-համերգ

Գոռ Թումանյանի հուշ-երեկոն տեղի էր ունենում Երևանի կոնսերվատորիայի 4-րդ հարկի դահլիճում: Այն կազմակերպել էին նրա համակուրսեցի ընկերները, ովքեր սովորել են նրա հետ, պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի դասարանում: Նրա կոնցերտմայստերներն են եղել դոցենտ Լուսյա Թունյանը, իսկ նրա մահից հետո, Քրիստինե Սիմոնյանը՝ ով ամբողջ երեկոյին նվագակցեց դասարանի կազմակերպած համերգին: Կազմակերպիչն էր նաև տողերիս հեղինակը, ով ճանաչել է Գոռ Թումանյանին դեռ կոնսերվատորիա չընդունված՝ դպրոցական տարիքից, քանի որ նա արդեն մասնակցում էր մրցույթների և մշտապես դափնեկրի կոչումներով էր վերադառնում Հայրենիք:

10



Գոռ Թումանյան

## Ծովինար Չալոյանի դասախոսությունները. «Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

Հաշվի առնելով ԵՊԿ Երաժշտության պատմության ամբիոնի պրոֆեսոր Ծովինար Չալոյանի ցանկությունը, որը նա արտահայտել էր ամսաթերթի ստեղծման առթիվ իր շնորհավորականում. *«Հանճարեղ Սոկրատեսն առաջինն էր, որ ասաց. «Մարդը պետք է գեղեցիկ լինի ոչ միայն արտաքինով, այլև՝ հոգով և իմացական կարողությամբ (kalos-kagatos)»: Մեր կոնսերվատորիայի թերթի առաջին համարի լույս ընծայման առիթով մաղթում եմ աստիճանաբար ձգտել դեպի կատարելություն թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ: Ցանկալի է, որ յուրաքանչյուր համարում թերթն ունենա մի անկյուն, որտեղ խոսք լինի գեղագիտական դաստիարակության մասին՝ նպատակ ունենալով ավելի բարձր պահել հայ երաժշտի և մտավորականի պատիվը»,* այս հոբելյանական համարում սկիզբ ենք դնում՝ «Ծովինար Չալոյանի «դասախոսությունները»» խորագրով էջին, որտեղ կընդգրկվեն գեղագիտության պատմության և դաստիարակության մասին նյութեր: Դրանով հավերժացնում ենք նրա հիշատակը գրատպության միջոցով, որի անխոնջ մշակն է եղել նա:



Ծովինար Չալոյան

11

# Շնորհավորանքները «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման առիթով 2005 թվականին

1

**Սերգեյ Սարաջյանի ողջույնի խոսքը «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման առիթով** *(տե՛ս՝ «Երաժիշտ»1 դեկտեմբեր 2005 համարում)*

*Շատ մեծ նշանակություն եմ տալիս: Թերթ ունենալու անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում, սակայն ինչ-ինչ պատճառներով հետաձգվում էր տպագրությունը: Կոնսերվատորիայի ուսանողները մեկուսացված են միմյանցից, իսկ թերթը կօգնի նրանց մերձենալուն և համախմբվելուն: Կոնսերվատորիայի ներսում տեղի ունեցող յուրաքանչյուր նորություն, միանգամից մեծ հետաքրքրություն է առաջացնում, և եթե մենք կարողանանք այս թերթը դարձնել իրոք բովանդակալից, հետաքրքրական, ապա թերթին առաջադրվող համախմբելու խնդիրը կիրականանա: Բացի այդ, ընթերցանությունն այսօր վտանգի տակ է, համակարգչայնացումը հեռացնում է մարդկանց տպագիր խոսքից, հատկապես գրքից, որի հուզական ներգործությունը ընթերցողի վրա մեծ է:*

*Թերթին մաղթում եմ երկար կյանք և հաջողություններ: Հուսով եմ, որ այն պատվով կկատարի իր առաքելությունը: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում իմ գործընկերներին՝ «ԵՊԿ հրատարակչությանը», որոնք աշխատում են մեծ ջանասիրությամբ: Եվ գիտեմ, որ թեև աշխատատար, սակայն շնորհակալ աշխատանք են կատարում: Բարի երթ մեր թերթին:*

## *Կոմիտասցիների լսելի և հարգելի ձայն*

*Այսօր հանրային տեղեկատվության բուռն զարգացման դարում հավասարապես կարևորվում են թե՛ ժամանակակից էլեկտրոնային միջոցները և թե՛ նախկինում ընդունված և ավանդական դարձած, բայց արդիականությունը չկորցրած ամսագրերն ու օրաթերթերը: Առանձնապես կարևոր եմ համարում թերթի նշանակությունը բարձրագույն ուսումնական հաստատության համար, քանի որ այն հրապարակ տեղեկատվության աղբյուր լինելուց զատ կոչված է դառնալու մասնագիտական քննարկումների ասպարեզ, դասախոսական և ուսանողական կազմի ստեղծագործական համագործակցության ևս մեկ գործուն միջոց: Բացի դրանից, թերթը լավագույն կապն է ուսանողության և ԲՈՒՀԻ ղեկավարության միջև, որը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ երիտասարդության մտքերն ու հույզերը, մտահոգություններն ու իղձերը:*

*Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի «Երաժիշտ» թերթի հիմնադրման կապակցությամբ, որը վաղուց էր սպասված և վերջապես իրականություն դարձավ: Համոզված եմ, որ թերթը խմբագրական կազմի ուժերով հաջողությամբ կկատարի իր առաքելությունը և կդառնա «կոմիտասցիների» լսելի և հարգելի ձայն:*

ԱԼԻՆԱ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ
***Արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր***

## *«Երաժշտի» հասցեն՝ «սրտից սիրտ»*

*Վերջապես... «Երաժշտական Հայաստան» հանդեսը «բողբոջ» տվեց՝ ասպարեզ եկավ «Երաժիշտ» թերթը: Այն վաղուց էր սպասված թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների կողմից: Անշուշտ, «Երաժշտական Հայաստան»-ը պատշաճ մակարդակով լուսաբանում է անցյալի և ներկայի մշակութային հիշարժան իրադարձությունները, երաժշտագիտական մտքի զարգացումները: Մինչդեռ տեսադաշտից դուրս էին մնում ուսանողական առօրյան, օրախնդիր հարցերը, որոնք հանդեսի եռամյա պարբերականության ընթացքում, բնականաբար, կկորցնեին իրենց հրատապությունը: Իսկ թերթի հաճախականությունը, տպաքանակը, մատչելիությունը հնարավորինս կարագացնեն, այսպես կոչված, հակադարձ կապը՝ թղթակիցների և ընթերցողների միջև կաշխուժացնեն երկխոսությունը: Թերթը կհասցնի հետևել համերգների, պրեմիերաների հարափոփոխ գեղադիտակին, ազդու կդարձնի քննադատությունը և արձագանքը, կարտացոլի ուսանողական կյանքի անցուդարձը:*

*Լավ հնարավորություն է ստեղծվել հատկապես երաժշտագիտական ամբիոնի ուսանողների համար առաջին քայլերը կատարելու մամուլում, հմտանալու գրավոր խոսքի բնագավառում: Թերթը կարող է մրցույթներ անցկացնել, խրախուսել, հրապարակել լավագույն աշխատանքները և այլն: Այն իր շուրջն առավել սերտորեն կհամախմբի ուսանողներին՝ միմյանց և դասախոսների հետ, կգրանցի իր էջը երաժշտական կյանքի տարեգրության մեջ:*

*Ողջունում եմ նորահիմն թերթը և շնորհակալություն հայտնում նախաձեռնողներին:*

Ձեր հավատարիմ ընթերցող՝
**ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ**

*Մամուլի դաշտում մասնագիտական աշխատանքը ոչ միայն մխիթարանք է, այլև՝ անհրաժեշտություն: Համոզված եմ, որ մեր թերթն անդրադառնալու է ոչ միայն կոնսերվատորիայի ներսում ընթացող անցուդարձին, այլ նաև նրանից դուրս, որովհետև, ի վերջո երաժշտական մշակութային կյանքում տեղի ունեցող ամեն ինչ իր արմատներով կապվում է կոնսերվատորիայի հետ: Թեև նրա գործառույթը որոշված է՝ որպես կոնսերվատորիայի թերթ, բայց ցանկալի է, որ դառնա հանրապետության մշակութային մամուլի մի նոր օրինակ: Ուրախալին այն է, որ թերթում խոսվելու է բացառապես մասնագիտական արվեստի մասին: Թերթի շուրջ համախմբված է լինելու հայ երաժշտական մտավորականությունը:*

*Ես կարևորում եմ այս թերթի լույս ընծայումը, ուրախ եմ նման նախաձեռնության համար և պատրաստ եմ օգնել, ինչով կարող եմ: Ցանկալի է, որ թերթն անդրադառնա երաժշտության բոլոր ճյուղերին, լինի անաչառ, նպատակասլաց: Մաղթում եմ Ձեզ եռանդ ու կորով, ջանասիրություն, աշխատասիրություն:*

*Ձեր թերթը դառնա սպասված, սիրելի հազարավոր մարդկանց համար: Բարի երթ...*

ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ
***«Սայաթ-Նովա» անսամբլի գեղարվեստական ղեկավար,***
***կոնսերվատորիայի պրոֆեսոր,***
***բանասիրական գիտությունների թեկնածու, այժմ դոկտոր***

3



***«ԵՊԿ հրատարակչության» ԵՊԿ 103 սենյակի հատկացման բացման և «Երաժիշտ» ամսաթերթի ստեղծման առիթով օրհնությունը՝ Տ. Նավասարդ արքեպս. Կճոյանի, 2006 թ. փետրվարի 8-ին***
***Վալենտին Թովմասյան, Գոհար Շագոյան, պրոֆեսորներ և հրատարակչության ջատագովներ, ամսագրի խմբագրական խորհրդի անդամներ՝ Ալինա Փահլևանյան, Էդվարդ Միրզոյան***



***«ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսը, ԵՊԿ 103 սենյակի տրամադրումը 2005-ից***
***Ս. Ազնաուրյան, Մ. Գևորգյան, Հ. Սմբատյան, Գ. Շագոյան, Ս. Սարաջյան, Ա. Ավանեսով, Ս. Ղուկասյան, Ա. Ավանեսով, Վ. Թովմասյան, Լ. Տոնոյան, Դ. Ղազարյան, Ի. Տիգրանովա, Ե. Կոչիկյան, Ս. Մուրադյան, Շ. Մեհրաբյան, Ժ. Զուրաբյան, Ն. Սամվելյան***



***հյուր և հեղինակ՝ Դանիել Երաժիշտ, Հրանտ Խաչիկյան, Վալենտին Թովմասյան, Եվա Կոչիկյան, ուղեկցող սարկավագ, հյուր՝ Սիլվա Բաբայան, Գոհար Շագոյան, հյուր՝ Մարիա Ենոքյան***
***«ԵՊԿ հրատարակչության» այցելությունը Կաթողիկոսարան, Վեհարան, Ս. Էջմիածին, 2006 թ.***

## Շնորհավորանքները «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման առիթով 2005 թվականին

### Ոգևորող իրադարձություն

2

Կոնսերվատորիայի ղեկավարության իրագործած արժեքավոր նախաձեռնությունների շարքում, բուհական թերթի թողարկումը հատկապես, ուրախալի իրադարձություն է: Կոնսերվատորիաի թերթի անհրաժեշտությունը վաղուց է հասունացել. այն կարող է անգնահատելի դեր խաղալ մեր բուհի կյանքում:

Բուհական պարբերական մամուլը կարող է լայն հնարավորություններ ընձեռել: Ահա դրանցից մի քանիսը:

Կստեղծվի տեղեկատվական դաշտ, որը կնպաստի մեզ այդչափ չհերիքող շփմանն ու միավորմանը: Թերթում «կհնչեն» ուսանողության և դասախոսական կազմի խնդիրներն ու առաջարկները. մենք վկա կդառնանք կոնսերվատորիայի ղեկավարության հետ հետաքրքիր, իսկ երբեմն էլ հուզիչ երկխոսությունների:

Թերթում կլուսաբանվեն բուհական կյանքի հատկանշական իրադարձությունները, մասնավորապես բոլոր բաժինների ուսանողների ստեղծագործական նվաճումները: Կքննարկվեն ռեկտորատի, ֆակուլտետների, ամբիոնների կազմակերպած միջոցառումները, դասարանական համերգներն ու մենահամերգները, կոնֆերանսները և այլն: Տեղ կգտնեն նաև ստեղծագործական խնդիրներ, ինչպես և ուսուցման հարցերին վերաբերող արդյունավետ քննարկումներ:

Ուշադրության կենտրոնում, անկասկած, կլինի ամենաարդիական թեման՝ մեր հասարակական կյանքը:

Պակաս կարևոր չէ նաև մեկ այլ բան.

Թերթը կդառնա կարծես կոնսերվատորիայի կյանքի տարեգրությունը, դրա ընդհանրացված պատմությունը: Հատկապես, եթե դրանում տեղ կհատկացվի հիմնական իրադարձությունները լուսաբանող պարբերական լրատվությանը: Նշենք նաև, որ անդրադառնելով և քննադատաբար վերաիմաստավորելով կոնսերվատորիայի կյանքը, թերթն այդքանով կազմակերպելու է այն:

Ու ևս մի կարևոր հանգամանք: Մեր բուհական մամուլը հնարավորություն կստեղծի արտասահմանյան կոնսերվատորիաների հետ փոխադարձ շփումների, տեղեկատվության փոխանակման համար, կդառնա ստեղծագործական փորձի փոխանակման հիմք:

Ամեն ինչ թվարկելն անհնար է, շատ բան կգտնվի հետագայում:

Շնորհավորենք իրար, այս հրաշալի իրադարձության կապակցությամբ:

**ՎԻԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ**
*Դաշնամուրային ֆակուլտետի պրոֆեսոր*



*Վալենտին Թովմասյան, Հռիփսիմե Մկրտչյան (2008-ին ռուս տեքստերի խմբագիր), հեղինակ և Նյու-յորքաբնակ բարերար, երաժշտագետ՝ Գրիգոր Փիտէճեան, Գոհար Շագոյան, հեղինակ և հյուր երգչուհի, ԵՊԿ դոցենտ՝ Արմենուհի Սեյրանյան, Սոֆա Ազնաուրյան, Հովհաննես Մուրադյան, «ԵՊԿ հրատարակչություն», 2008 թ.*



*Եվա Կոչիկյան (2004-2006 թթ.՝ ռուս. տեքստերի խմբագիր), Մարիամ Ասատրյան (նոտային տեքստերի խմբագիր 2006-2011 թթ.՝ ԵՊԿ ինֆորմատիկայի դասախոս), Գոհար Շագոյան (1996-ից՝ հիմանդիր-գլխավոր խմբագիր, 2004-ից՝ հիմանդիր-հրատարակիչ-տնօրեն, «Երաժիշտ» ամսաթերթը՝ 2005-ից), Նունե Սամվելյան (2000-2012 թթ.՝ «ԵՊԿ հրատարակչության» դիզայներ, նաև Ազգային գրադարանի համակարգչային բաժնի վարիչ), Արթուր Ավանեսով (2000-2006 թթ.՝ անգլ. տեքստերի խմբագիր), Սուսաննա Ղուկասյան (2005-2012 թթ.՝ համակարգչային օպերատոր), Սոֆա Ազնաուրյան (2000-ից առ այօր՝ ռուս. տեքստերի խմբագիր, կոմպոզիտոր), Վալենտին Թովմասյան (2001-2017 թթ.՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար, 2005-2012 թթ., ԵՊԿ հրատ. բաժնի վարիչ) Հովհաննես Մուրադյան (2004-2018 թթ.՝ հայերեն տեքստերի խմբագիր, սրբագրիչ), «ԵՊԿ հրատարակչություն», Նոր տարի-2007 թ.*

## Շնորհավորանքներ «Երաժիշտ» ամսաթերթի անսյած ուղղու 5-ամյակի առթիվ

1

«Երաժիշտ» ամսաթերթը նշում է իր գործունեության 5-րդ տարեդարձը: Ուրախալի և գնահատության արժանի մի երևույթ, որ հավաստում է իր կենսական անհրաժեշտությունը մեր երաժշտական կյանքի ամենօրյա անցուդարձում:

Տարիներ ի վեր բաղձալի ցանկություն էր ունենալ «Երաժիշտ» ամսաթերթի նման մշակութային տեղեկատվության գործուն օղակ, որտեղ կարտացոլվեին երաժշտական իրադարձությունները. «Այժմ, այստեղ և այս ժամանակում» սկզբունքով:

Իր հնգամյա անցած ճանապարհին «Երաժիշտ» ամսաթերթը հետևողականորեն իրագործել է այդ նպատակները, հիմնավորել իր գործելակերպը՝ հրապարակելով նյութեր բազմաբնույթ ժանրային ու բովանդակային ընդգրկումներով՝ համերգային կյանքից մինչև պատմական մշակութային իրողություններ, արժանահիշատակ դեպքեր ու դեմքեր, մասնագիտական խնդիրներ, լուսաբանում են ոչ միայն Հայաստանի, այլև Սփյուռքի երաժշտական կյանքի հետ կապված ուշագրավ երևույթներ:

Առանձնահատուկ կարևորում եմ, որ ամսաթերթի խմբագրությունը լայն ասպարեզ է տվել դեռևս ուսանող, կամ ասպիրանտ, կամ պարզապես մասնագիտական ձևավորման ընթացքում գտնվող երիտասարդներին:

Սրտանց շնորհավորում եմ «Երաժեշտ» ամսաթերթի խմբագրության բոլոր աշխատակիցներին, նրանց հմուտ ու նվիրյալ ղեկավարներին և ցանկանում եմ հետագա հաջողություն ու անսպառ եռանդ:

Լավագույն մաղթանքներով՝

**ԺԱՆՆԱ ԶՈՒՐԱԲՅԱՆ**
*Արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր,*
*ԵՊԿ գիտքարտուղար, «ԵՊԿ հրատարակչության» խորհրդի անդամ*
20.12.2010



*Հովհաննես Մուրադյան, Գոհար Շագոյան, Մարգարիտա Կիրակոսյան («ԵՊԿ հրատարակչության» ռուսերեն տեքստերի խմբագիր-թարգմանիչ (2010-2012 թթ.), երաժշտագետ, դասավանդող)*



*Գոհար Շագոյան, Երանդ Երկանյան, Հասմիկ Համբարյան, Սոֆա Ազնաուրյան, հյուր, հեղինակ՝ խմբավար, կոմպոզիտոր, Ժան Ալմուխեան (Բուենոս-Այրես, Արգենտինա), Հովհաննես Մուրադյան, 2011 թ.*



*Հասմիկ Համբարյան, Կարինե Բրուտյան (ռուսերեն տեքստերի խմբագիր 2007 թ., ԵՊԿ դասախոս), Սոֆա Ազնաուրյան, Գոհար Շագոյան, Մարգարիտա Կիրակոսյան, Հյուրասիրություն հրատարակչության բարեկամ՝ Սեդրակ Մամուլյանի կողմից «Արարատ-հոլում», 2011 թ.*

«Երաժիշտ» ամսաթերթը պատվով անցավ իր կայացման շրջանը: Շատ կարևոր էին համերգների, գիտաժողովների, մեր ականավոր երաժիշտների հոբելյանների լուսաբանումները: Կարևոր եմ համարում նաև տեղի ունեցած միջոցառումների, առաջին հերթին համերգների և համերգաշարերի պրոֆեսիոնալ մեկնաբանումները մեր երաժշտագետների կողմից: Ցանկանում եմ անձնակազմին օլիմպիական առողջություն. քաջ գիտակցելով, որ հաճախ արդյունքի ենք հասնում ոչ թե շնորհիվ, այլ հակառակ պարագաների, այնուամենայնիվ՝ ստեղծագործական նոր ծրագրեր և նորանոր ձեռքբերումներ:

**ԷԴՎԱՐԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**
*ՀՀ ժողովրդական արտիստ,*
*ՀՀ Պետական մրցանակի և միջազգային մրցույթների դափնեկիր,*
*Կոմիտասի անվ. ԵՊԿ նվագախմբային ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր,*
*«Կոմիտասի անվ. լարային քառյակ»ի առաջին ջութակահար*

«Երաժիշտ» ամսաթերթի ստեղծման առիթով Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներից շատերն իրենց ուրախություններն ու ցանկությունները կիսեցին թերթի անդրանիկ համարում՝ 2005թ. դեկտեմբեր: Հնչած բոլոր ողջույններն ու մաղթանքները լի էին գորովանքով, ջերմությամբ, բայց տողերիս հեղինակի համար առանձնակի թանկ ու հարազատ, պարտավորեցնող և ոգևորող էր անվանի երաժիշտ, պրոֆեսոր, դաշնակահար Վիլլի Սարգսյանի «Ոգևորող իրադարձություն» խորագիրը կրող շնորհավորագիր-հոդվածը (տես սույն համարի էջ 3, նաև «Երաժիշտ» 1(դեկտեմբեր) 2005 համարում): Այն հավաստում է, որ թերթն իր հիմնական՝ լրատվական աղբյուր լինելու դերից բացի, կարող է ծառայել նաև՝ որպես կրթիչ ազդակ, մշակութային անջրպետներ քանդող օղակ, ուր կմիավորվեն բոլոր այն մարդիկ, որոնց նպատակն ու գործը մեկն է՝ երաժշտությունը:

**ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
*երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի առաջին գլխավոր խմբագիր*

## Շնորհավորանքներ «Երաժիշտ» ամսաթերթի ստեղծման 10-ամյակի առթիվ





*«Երաժշիտ» ամսաթերթի 10-ամյա անցած ուղին ներկայացնում է գլխավոր խմբագիր՝ Արմինե Աթոյանը*
*«ԵՊԿ հրատարակչության շնորհանդեսը Թումանյան 40՝ «Ակումբում», հունվարի 28, 2015 թ.*
*Գոհար Շագոյան, Սարգիս Հովհաննիսյան (նոտային խմբագիր 2015-ից)*



*Սվետլանա Սարգսյան, Ստեփան Բաբաթորոսյան, Աննա Բակունց, Տիգրան Բունիաթյան, հյուր Իրանից՝ Կարմեն Ոսկանյան, Կարինե Բրուտյան, Անահիտ Մուղնեցյան, Արմինե Աթոյան, Գոհար Շագոյան, Կարինե Խալատովա, Բաբկեն Սիմոնյան, Ռաֆֆի Միքայելյան,*
*«Երաժշիտ» ամսաթերթի 10-ամյա անցած ուղին ներկայացնում է գլխավոր խմբագիր Արմինե Աթոյանը*
*«ԵՊԿ հրատարակչության շնորհանդեսը Թումանյան 40՝ «Ակումբում» հունվարի 28, 2015 թ.*

1

*Ողջունում եմ «Երաժիշտ» ամսաթերթին 10-ամյա հոբելյանի կապակցությամբ:*

*Մեկ տասնամյակի ընթացքում խմբագրակազմին հաջողվել է հաղթահարել բոլոր փորձություններն ու գոյատևել առ այսօր: Հրաշալի կլինի, եթե հանրապետության միակ երաժշտական թերթն ավելացնի վերլուծական հոդվածները հայ կոմպոզիտորների, հատկապես երիտասարդների ստեղծագործությունների մասին: Ավելի շատ անդրադարձ կատարի հայկական երաժշտության պատմությանը, որի էջերում փայլուն կենսագրականներ ունենք: Կան նաև փաղանդավոր հեղինակներ և ստեղծագործություններ, որոնք դեռևս ուսումնասիրված չեն և այդ պատճառով մնում են ստվերում չգտնելով իրենց տեղը երաժշտական արվեստում:*

*Մաղթում եմ ստեղծագործական անսպառ եռանդ, շարունակականություն և միայն հաղթանակների արձանագրում, որոնք միանշանակ չեզնով հպարտանալու առիթ կընձեռեն:*

***Հարգանքներով՝ ՀԿՄ նախագահ Արամ Սաթյան***

*Սրտանց շնորհավորում եմ երաժշտության և երաժիշտների մեծ բարեկամ «Երաժիշտ» ամսաթերթի տասնամյակը: Շնորհիվ թերթի, շահագրգիռ մասնակիցն ենք դառնում՝ հարազատ կոնսերվատորիայի անցուդարձին, ճանաչում՝ նրա առօրյան և հաղորդակից լինում երևութային իրադարձություններին: Շնորհիվ թերթի, փոխադրվում ենք այլ երկրներ՝՝ճանաչելու համար մեր հայրենակիցների բազմաբեղուն գործունեությունը հայրենիքի սահմաններից դուրս, և իհարկե, թերթում բազմաթիվ հետաքրքրական նյութեր են տպագրվում, որոնք պետք է որ լրացնեն մեր իմացության, գիտելիքի ծարավը: Կարևոր է «Երաժշտի» դերն ու նշանակությունը մեր կյանքում:*

*Երաժշտության միակ կանոնավոր պարբերականը՝ հանրապետությունում, այն էլ երկլեզու: Թերթն, ըստ էության, դառնում է արդի երաժշտական կյանքի տարեգրողը, մի բան, որ այդչափ կարևոր ու պարտավորեցնող է: Ուրեմն, թող մեր «Երաժիշտ»ը լինի միշտ ավյունով լի, թող գրիչը թեթև լինի, խոսքը՝ ծանրակշիռ:*

*Խմբագրական ամբողջ կազմին, ոգեշնչող ու ղեկավար, հիմնադիր Գոհար Շագոյանին թերթում՝ Արմինե Աթոյանի գլխավորությամբ, ստեղծագործական բազում փայլատակումներ եմ մաղթում: Մշտապես լինեք շարժման մեջ և դեպի նոր հորիզոններն ուղղված:*

*Սիրով ծեր՝*
*Սվետլանա Նավասարդյան*

*Коллектив библиотеки Ереванской государственной консерватории имени Комитаса поздравляет редакцию газеты "Еражишт" с 10-летним юбилеем. Примите от нас пожелания творческих взлетов, доверия читателей и чутья на все новое и интересное. Желаем газете быть востребованной, а ее читателям - разнообразных по тематике и профессиональных по качеству текстов для чтения. Пусть каждый выпущенный номер будет максимально ожидаемым и желанным. Благополучия вам и процветания.*

*Зав.библиотекой им. К. С. Сараджева,*
*доцент В. М. Оганесян*

*Հարգելի բարեկամներ,*

*Շնորհավորում եմ Հայաստանի մայր երաժշտանոցի՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հրատարակչության «Երաժիշտ» ամսաթերթի 10-ամյա հոբելյանը:*

*Բուհական պարբերականները մի յուրահատուկ առաքելություն ունեն. նրանք ուսումնական հաստատության կյանքի վավերագրողն ու լուսաբանողն են, ուսանող-երիտասարդության մտքերի ու ձգտումների թարգմանը, հիմնախնդիրները բարձրաձայնողը: Այսպիսի առաքելություն է իր ուսերին առել նաև «Երաժիշտ» ամսաթերթը՝ հանրապետության ամենամշակութային կրթօջախներից մեկի տարեգրությունը կերտողը:*

*Ամսաթերթին ու նրա խմբագրակազմին մաղթում եմ երկար ճանապարհ, անխափան պարբերականություն, և որ այն միշտ հավատարմորեն ծառայի իրեն սպասող ընթերցողին, երբեք չկորցնի իր թարմությունն ու արդիականությունը և իր նոր տասնամյակներին ընդառաջ գնա որոնումների ու կատարելագործման ոգով:*

***ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ***
***Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր***
***2015 թ.***

### *10 лет – это только первая ступень*

**В истории Ереванской государственной консерватории им. Комитаса за ее 90–летнюю историю было немало запоминающихся страниц, связанных с творческо–исполнительской деятельностью представителей разных профессий, обогативших музыкальное искусство, музыкальную науку и музыкальное образование. Но есть страница особая. Ее заслуги не столь очевидны, социальное назначение не всегда востребовано, прямое влияние на музыкальную практику отсутствует. Однако без этой страницы ЕГК, как и любой вуз, свой статус теряет. Речь идет о ежемесячной газете "Еражишт" ("Музыкант"), основанной 10 лет тому назад на базе "Издательства ЕГК". Вначале тематика газеты была связана талько с жизнью консерватории, но постепенно расширились круг наблюдения и объекты освещения. Отсутствие в стране периодического издания по музыке естественно привело к выходу за пределы вузовских событий, обращению к тому значительному, что происходит в Армении, а иногда – и за ее пределами. Двуязычность газеты – на армянском и русском языках (с 2013) – расширяет читательскую аудиторию, приобщает к нашей музыкальной жизни людей разных национальностей и из разных стран. Примечательно, что в газете находят место статьи как профессионалов, так и только начинающих. Перо студента, его художественные вкусы и мироощущение оттачиваются благодаря печатной продукции. Этот процесс необходимо наращивать, представляя больше возможностей для формирующихся музыкантов, в частности, музыковедов. Как и любая газета, "Еражишт" имеет свои достоинства и недостатки. Хочется пожелать свободы мыслей, большей критической направленности, освещения проблемных сторон музыкальной жизнедеятельности. Панегирики, одностороннее восхваление нужны только для личного архива музыкантов. А для прогресса, особенно вузовского, нужна объективная и профессионально аргументированная оценка происходящего. Коллектив редакции "Еражишт" настроен на прогресс. Значит, надо всем вместе строить наше будущее.**

**СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН**
***доктор искусствоведения, профессор ЕГК***

**Поздравляем армянскую газету "Музыкант" с десятилетним юбилеем!**

**Дорогая редакция газеты "ЕРАЖИШТ" ("Музыкант")!**

**Разрешите из далекой заснеженной Скандинавии поздравить Вас с десятилетним юбилеем!**

**За короткий десятилетний период плодотворной деятельности Вы много преуспели, неуклонно информируя читателей о музыкальных событиях в Ереване и за его пределами, открывая новые имена солистов и композиторов, рассказывая о текущих изданиях в области музыки, о музыкальных конференциях, семинарах юных музыкантов–исполнителей, дирижеров и оркестровых музыкантов, поднимая вопросы развития образования – и этот список можно продолжить!**

**Сердечно благодарим Вас за внесенный незаменимый вклад в обогащение армянской национальной культуры и желаем коллективу молодой газеты "ЕРАЖИШТ" дальнейших творческих успехов!**

**Карин Хельман–Геворкян,**
***концертирующий пианист, композитор, музыкальный исследователь, член Музыкального общества пианистов Скандинавии, общества ЕПТА, общества международного конкурса Stockholms International Music Competition, международного конкурса фортепианных дуэтов им. Л.А. Брук "Брат и Сестра" (С–Петербург), международного фестиваля–конкурса фортепианной музыки стран Баренц–региона "Северное сияние"/Nordic Light"/ ( Карелия)***

**Каро Акопян,**
***поэт и переводчик, главный редактор газеты "Новый горизонт", председатель армянского общества культуры в городе Уппсала,***

***Редакция уникальной Международной онлайн–библиотеки The Article Bay***

5

## Շնորհավորանքներ «Երաժիշտ» ամսաթերթի ստեղծման 10-ամյակի առթիվ

4

### «Երաժիշտ» ամսաթերթը 10 տարեկան է

Այս տարիների ընթացքում այն անցել է փառավոր ուղի շնորհիվ խմբագրակազմի պատրաստակամ ու նվիրյալ աշխատանքի: Դեռևս ուսանողական տարիներից անչափ հետաքրքրությամբ էի հետևում այս ամսաթերթի գործունեությանը, որտեղից ստացած տարբեր նորություններով անմիջապես կիսվում էի ընկերներիս հետ: Պատահական չէր, որ հրատարակության ասպարեզում առաջին քայլերս կատարել եմ ուսանողական տարիներին, «Երաժիշտ» ամսաթերթում: Այդ ժամանակ գլխավոր խմբագիրն էր երաժշտագետ, կոմպոզիտոր՝ Տաթև Ամիրյանը, որը դրական արտահայտվելով ներկայացրածս առաջին հոդվածի մասին, խրախուսեց և ոգևորեց: Համատացած եմ, որ այս ասպարեզում, ինչպես նաև ցանկացած գործում, հատկապես առաջին քայլերը կատարող երիտասարդներին ոգևորելով, խրախուսելով և ճշգրիտ ու տեղին խորհուրդներ տալով միայն կօգնենք ու ճիշտ ուղով գնալով կկենտրոնացնենք նրանց ուժերը: Այդ առումով կոչ եմ անում բոլոր երիտասարդ երաժշտագետներին, ովքեր ինչ-որ տեղ նաև պարտավոր են, ելնելով մասնագիտությունից, քանի որ նրանք որպես մասնագետներ կայանում են նաև այստեղ, և այն երաժիշտներին, ովքեր ունեն վերլուծական միտք, գրելու շնորհ և ասելիքը թղթին հանձնելու կարողություն, չկորցնեն իրենց այդ ձիրքը, այլ զարգացնեն ու ծառայեցնեն հայ երաժշտության պատմության զարգացմանը: Դրա համար հիանալի հնարավորություն է «Երաժիշտ» ամսաթերթում՝ Հայաստանում երաժշտական միակ մասնագիտական թերթում հանդես գալու մասնագիտական հոդվածներով:

2014-ից ստանձնելով ամսաթերթի գլխավոր խմբագրի պաշտոնը, համակվեցի մեծ պատասխանատվությամբ: Շարունակելով նախորդ գլխավոր խմբագիրների՝ Աննա Գևորգյանի (1-ին գլխավոր խմբագիր), Տաթև Ամիրյանի, Հասմիկ Համբարյանի և Շուշան Այվազյանի, գործը և աշխատելով փորձառու, բանիմաց և մեծ գիտելիքների տեր խմբագիրների՝ Հովհաննես Մուրադյանի, Վալենտին Թովմասյանի, Սոֆա Ազնաուրյանի, ինչպես նաև հիանալի անձնավորության, իր գործին քաջատեղյակ դիզայներ՝ Գոհար Հովհաննիսյանի և իհարկե, իր գործին անմնացորդ նվիրյալ, անսպառ գիտելիքներով, աշխատասեր, եռանդուն, հմուտ, բարի և համբերատար ղեկավարի՝ Գոհար Շագոյանի հետ փորձում ենք առավել զարգացնել և ընդլայնել ամսաթերթը, չկորցնելով վերջինիս թարմությունն ու արդիականությունը:

Ամսաթերթում լուսաբանվում է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երաժշտական կյանքը: Այստեղ անդրադառնում ենք տարբեր միջոցառումների, համերգների, նոր հրատարակությունների, նորությունների, ինչպես անվանի երաժիշտների, երաժշտական գործիչների ու մանկավարժների, այնպես էլ երաժիշտ-ուսանողների, երաժշտական ու արվեստի դպրոցների աշակերտների ելույթներին, գործունեությանը՝ խրախուսելով նրանց հաջողությունները: Անչափ ուրախալի է, որ ամսաթերթում իրենց տարբեր հոդվածներով հանդես են գալիս ոչ միայն ԵՊԿ ուսանողները, այլ նաև պրոֆեսորներ՝ երաժշտագետներ, արվեստագիտության դոկտորներ, թեկնածուներ, կատարողներ:

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման 10-ամյակի առթիվ:

Մաղթում եմ հարատևություն, զարգացման առանց խոչընդոտների և առավել հետաքրքիր ուղի, աշխատակազմին՝ բեղուն և արդյունավետ գործունեություն, թարմ ու պայծառ միտք:

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ**
*երաժշտագետ, կոմպոզիտոր,*
*«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր*



*Մեդեա Աբրահամյանի ծննդյան տարեդարձը՝ կազմակերպված «ԵՊԿ հրատարակչության» կողմից, ներածական խոսքը Գոհար Շագոյանի, Համերգային ծրագրի մասնակիցները և հյուրերը*



*Շառլ Ազնավուրի ծննդյան 90-ամյակին նվիրված ամսագիրը, նկարը նվիրաբերած «ԵՊԿ հրատարակչության»ը հեղինակ Մարինա Քոչարյանից, լուսանկարը Նիկոլա Ազնավուրի, պրոֆեսոր Ն.Ս. Պիրումովա. Գ.Շագոյան, Ա.Աթոյան, Ս. Ազնաուրյան, Մ. Քոչարյան 2014 թ.*

## «Երաժիշտ» ամսաթերթի կարևորությունն արժևորած անվանի երաժիշտների մաղթանքները

1

Ուրախալի երևույթ է: Կարևոր է՝ թե ինչպիսին կլինի այն և որքանով կծառայի իր նպատակին, կոչմանը: Թերթը պետք է լինի անկախ, անաչառ, համարձակ, բայց այդ անկախությունը լինի խելամիտ, այլապես կունենա անցանկալի հետևանքներ: Թերթի խմբագրից շատ բան է կախված, նա իր գործի ընթացքում պետք է հենվի իրեն հավատացողների աջակցության վրա: Ես պատրաստ եմ օգտակար լինել, որքան ուժերս կներեն:



*Սոֆա Ազնաուրյան, Էդվարդ Միրզոյան, Գոհար Շագոյան, 2000 թ. «Երաժշտական Հայաստան»ամսագրի խմբագրությունը՝ ԵՊԿ 110 սենյակում, 2000-2005 թթ.*

Թերթին մաղթում եմ տոկունություն, համբերատարություն և սկզբունքայնություն: Բարի երթ...

**ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ**
*ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,*
*կոմպոզիտոր, պրոֆեսոր*

### Ճշմարիտ գնահատությունների պահանջն է

Մայրաքաղաքի երաժշտական հախուռն կյանքը և այն ներկայացնող երաժշտարվեստը վաղուց արդեն բազմակողմանի լուսաբանումների, քննարկումների, ճշմարիտ գնահատությունների պահանջն է թելադրել: Այդ անհրաժեշտ և կարևոր գործը որոշել է իրականացնել ասպարեզ եկող «Երաժիշտ» ամսաթերթը:

Խմբագրական այս անձնակազմը, որ երաժշտական աշխարհին ներկայացնում է «Երաժշտական Հայաստան» ամսագիրն ու տարբեր աշխատություններ, տարիների իր նվիրյալ, պատասխանատու և շահագրգիռ աշխատանքով իրավասու է ամսաթերթի հրատարակմանը:

Կարծում եմ թերթը կունենա ընթերցողների իր լայն շրջանակները, մանավանդ, եթե այն բովանդակի նաև լուրջ և պրոֆեսիոնալ քննադատական հոդվածներ, որի կարիքը շատ է անհրաժեշտ: Բարյացկամ, բանիմաց քննադատություն, որն օգտակար լինի և՛ ստեղծագործողին, և՛ կատարողին, և՛ համերգային կյանքի կազմակերպիչներին և՛ երաժշտասերին: Առողջ քննադատությունն ուղեցույց լինելու կարողություն ունի:

Ցանկանանք «Երաժիշտ» պարբերաթերթին և այն հրատարակող անձնակազմին հաջողություններ, բարի երթ, իրենց գործի կարևորության խոր ըմբռնում և դրանից բխող հոգևոր բավարարության անհրաժեշտ զգացումները:

**ԱՐԱՔՍԻ ՍԱՐՅԱՆ**
*Արվեստագիտության թեկնածու,*
*ԵՊԿ պրոֆեսոր*
*2005 թ.*



*Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, արվեստանոցում՝ Ա. Սարյանը կազմակերպել էր Ղ. Սարյանի ծննդյան 85-ամյակին նվիրված «Երաժշտական Հայաստան» ամսագրի շնորհանդեսը հենց նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերի 30-ին 2005 թվականին, նաև համերգային ծրագիր կար, որտեղ հնչեցին անվանի երաժիշտների կատարմամբ սարյանական հանրածանոթ երկերը: Ներկա էին հյուրեր ԱՄՆ-ից և Կանադայից և ամբողջ հրատարակչակազմը, ընտանիքն ավարտվեց սարյանական հյուրասիրությամբ*

*Վերջին տարիների ընթացքում ակտիվացել է մայրաքաղաքի երաժշտական կյանքը և թելադրվում, պահանջվում է երաժշտական այնպիսի տեղեկատվությունը, որը ներկայացնի երաժշտական կյանքի անցուդարձը: Իմ մեծ գոհունակությունը պետք է հայտնեմ, որ «Երաժիշտ» թերթը ցույց է տալիս իր ակտիվ աշխատանքը և մեզ բոլորիս իրազեկ պահում. երաժշտական իրադարձություններին ու մեզ շրջապատող իրենց գործունեությամբ երաժշտությունը ներդնող անձանց կյանքին և գործունեությանը, դիմանկարների, անդրադառնում հոբելյանական իրադարձություններին, հիշում անցյալի մարդկանց և բազում այլ հարցերի լուսաբանմանը: Շատ համերգներ, որ բաց ենք թողնում, «Երաժիշտ» թերթը իրազեկ է պահում: Անհրաժեշտ է նշել նաև թերթում ակնառու աշխատակիցների ակտիվ, սրտացավ աշխատանքը և գործի նկատմամբ ունեցած պատասխանատվությունը: Նոր ընդգրկումներ և նոր հաջողություններ «Երաժիշտ» թերթին:*

**ԱՐԱՔՍԻ ՍԱՐՅԱՆ**
*ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ,*
*արվեստագիտության թեկնածու,*
*Կոմիտասի անվ. ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր*
*2010 թ.*

12

# «Երաժիշտ» ամսաթերթը 15 տարեկան է

1

Հանրապետությունում և համահայկական նշանակություն ունեցավ, 2005 թ. դեկտեմբերի 25-ին «Երաժիշտ» ամսաթերթի լույս ընծայումը, որի հիմնադրման ջատագովն էր ռեկտոր՝ Սերգեյ Սարաջյանը: Առաջին համարը շատ նշանակալից էր, երաժշտագիտական հրապարակախոսական միտքն էր տեղ գտնելու մասնագիտական մամուլում: Հիմնադրման և իր գոյության 15 տարիների ընթացքում թերթն ունեցել է զարգացում թե՛ նյութի բովանդակային առումով, թե՛ հեղինակների, որոնք ոչ միայն երաժշտագետներ են, կոնսերվատորիայի պրոֆեսորներ, ուսանողներ, այլև գրականագետներ, բանասերներ, որոնց հոդվածներն առնչվում էին երաժշտական արվեստի հետ:

«Երաժիշտ» ամսաթերթը գործում է «ԵՊԿ հատարակչության» խմբագրակազմի շնորհիվ, որը տարբեր տարիներին համալրվել է թարմ մտքի տեր երաժշտագետ-շրջանավարտ երիտասարդ գլխավոր խմբագիրներով: Նրանք զուգահեռաբար սովորում էին և՛ խմբագրական գործը, որովհետև այդ տարիների երաժշտագետներն արդեն չէին անցնում այդ դասընթացը (այն երկար տարիներ դասավանդել են երաժշտագետներին, հանձինս դոցենտ Ինդա Սերգեյի Իոնեսյանի, և գործնական դասընթացը վարում էր այժմ պրոֆեսոր՝ Նելլի Ավետիսյանը) և՛ գլխավոր խմբագրի գործառույթները, որոնց միաժամանակ ուսուցանում էր ամսաթերթի հիմնադիր և թողարկման պատասխանատու, հրատարակիչ Գոհար Շագոյանը, ով հրատարակված հոդվածներով ընտրում էր և հրավիրում աշխատանքի: Ամսաթերթը 15-ամյա պատմության ընթացքում ունեցել է հինգ գլխավոր խմբագիր:


Շնորհանդես, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր՝ Տաթև Ամիրյան, «Ակումբ», 2009 թ. հունվարի 28-ին «ԵՊԿ հրատարակչության» հիմնադրման 5-ամյակին

«Երաժիշտ» ամսաթերթը ունեցել է շնորհաշատ, գրագետ, ԵՊԿ լավագույն ուսանողների ընտրանի. առաջին գլխավոր խմբագիրն էր երաժշտագետ ԵՊԿ դասախոս Աննա Գևորգյանը, որն իր դասախոսական գործունեությունն է շարունակում և կյանքի բերումով էլ՝ խմբագրական գործը Ստամբուլում, հայկական ընտանիք կազմելով և զույգ երեխաներ դաստիարակելով: Մշտապես ամսաթերթի գլխավոր խմբագիր ընտրել ենք ավանդաբար երիտասարդ երաժշտագետ շրջանավարտներից և նրանք կատարելագործվելով մասնագիտական բարձրունքների հասնելով կրթվելով խմբագրությունում, այնուհետև իրենց ճանապարհին են հարթել: Այդպես գրեթե մեկ տարի աշխատելուց հետո Տաթև Ամիրյանը ուղևորվեց ԱՄՆ, որտեղ գործում է որպես դասախոս և կոմպոզիտոր: Նրան երկար տարիներ հաջող փոխարինեց երաժշտագետ գիտական պայծառ միտք ունեցող Համիկ Համբարյանը, որն այժմ աշխատում է Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանում, որպես գիտաշխատող, իր ձեռք բերած ունակությունները ներդնում նաև թանգարանային տքնաջան գործում: Նրան փոխնեփոխ փոխարինեցին 2012-ից 2014 թվականը երաժշտագետ՝


Դավիթ Պողոսյան (2006-2009 թթ. նոտային խմբագիր), հեղինակ՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, ԵՊԿ կատարողական արվեստի տեսության, պատմության և դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հիմնադիր Շուշանիկ Ափոյան, Գոհար Շագոյան, Սոֆա Ազնաուրյան «ԵՊԿ հրատարակչություն» 2009 թ.

Շուշան Այվազյանը, որը պաշտպանեց իր ատենախոսությունը (ղեկ. արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Վարդգեսի Երնջակյան) և տեղափոխվեց այլ աշխատանքի: 2014-2016 թթ. և 2018-ից առ այսօր աշխատում է երաժշտագետ, կոմպոզիտոր, ՀՀ ԳԱԱ ԱԻ հայցորդ (ղեկ. արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Կարինե Ազատի Ջաղացպանյան) Արմինե Աթոյանը, ով նաև դասավանդում է Արմավիրի արվեստի պետական քոլեջում, կապը պահպանելով նաև մարզային կրթական հաստատությունների հետ և նրանց առաջխաղացումների մասին տեղեկացնում «Երաժիշտ» ամսաթերթի ընթերցողներին: Արմինե Աթոյանը հետևողական և ամսաթերթում ստեղծված ավանդույթները պահպանող և նոր ուղիներ փնտրող անհատականություն է:

Հիմնադիր դիզայները շնորհաշատ սիրիահայ կիբեռնետիկ, ՏՏ տեխնոլոգիաների բարձրակարգ մասնագետ Քրիստափոր Փախանյանն է, ով հրատարակչության հիմնադիր դիզայներն է նաև: Մակետավորող և էջադրող են եղել դիզայներներ Նունե Սամվելյանը՝ կիբեռնետիկ և ՀՀ ազգային գրադարանի ինֆոմատիկայի և հրապարակումների բաժնի վարիչը, այժմ՝ Գոհար Հովհաննիսյանն է, ով 2012-ից է աշխատում և մակետի 2-րդ նախագծի հեղինակն է, փոփոխումը կատարել է 2018-ից՝ մտահղացումը ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանինն է:



«ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի հիմնադրումը 2005-ի դեկտեմբերի 25-ին էր՝ 1-ին համարի հրատարակումը և «ԵՊԿ հրատարակչության»ը տրամադրվեց կոնսերվատորիայի 103 սենյակը՝ «մեկ սենյականոց հրատարակչատունը»: Տեղի ունեցավ բացման միջոցառումը Սրբազանի օրհնությամբ (տես՝ էջ 1.)՝ 2006-ին




Խմբագիրներ էին բազմամյա փորձառություն ունեցող Հայաստանում և Սփյուռքում ճանաչված մտավորականներ՝ ռադիոլրագրողներ Հովհաննես Մուրադյանը 46 տարվա ստաժով, որից երկար տարիներ եղել է ՀՀ ռադիոյի երաժշտական գլխավոր խմբագրության բաժնի վարիչ, ում ղեկավարությամբ հասունացել և գործել են խմբագիր և մեկնաբան Վալենտին Թովմասյանը (40 տարուց ավելի) և Գոհար Շագոյանը (1994-1999 թթ.): Իսկ 2004 թվականից Գ. Շագոյանը Հովհաննես Մուրադյանին հրավիրեց ԵՊԿ հրատարակչությունում աշխատանքի, և Վալենտին Թովմասյանին, ով արդեն 2001 թվականից էր հրավիրված, որպես պատասխանատու քարտուղար, որոշ ժամանակ անց նաև հրատարակչության բաժնի վարիչ: Երկուսն էլ ամսաթերթում խմբագիրներ էին և հեղինակներ: Վալենտին Թովմասյանը և Հովհաննես Մուրադյանը հանրապետությունում և Սփյուռքում ճանաչված մտավորական-խմբագիրներ էին, ցավոք անցյալով ենք հիշում, որովհետև 2017 թվականի դեկտեմբերի 27-ին իր ծննդյան 80-ամյակից 10 օր անց Վ. Թովմասյանը հեռացավ կյանքից մինչև վերջին օրը աշխատելով և դասավանդելով կոնսերվատորիայում: Պարոն Հովհաննեսը թոշակավորվեց 2017-ին (2019 թ. դեկտեմբերի 19-ին կնքեց իր մահկանացուն): Մինչև հիմա նրանց տեղը թափուր է և անկրկնելի: Բոլորս, ովքեր մնացել ենք երևելի հրատարակչակազմից (ընդամենը հաստիքային 3 աշխատակիցներով, 2012 թվականից կրճատումներ եղան և շատ հոգեմաշ և անփառունակ կացություն է ստեղծվել հրատարակչությունում, ծանրաբեռնված աշխատանքով թե՛ ամսագրի, թե՛ ամսաթերթի, թե՛ ժողովածուի և թե՛ հրատարակչական գործում) օր չի լինում, որ չհիշենք պարոն Հովհաննեսի թևավոր խոսքերն օրինակ՝ *«Այսպես էլ որ մնա, լավ է»* այս խոսքերից բոլորը, հատկապես ռադիոյում «գժվում էին» ու անմիջապես պատասխանում. *«Հովհաննես հերիք է ասես քանի գնում վատանում է»*: Իսկ նա իմաստուն ժպտում էր ու լռում: Կամ շատ էր սիրում ռուսական ասացվածքն այլաբանորեն իր մեկնաբանությամբ, սակայն անպայման թարգմանաբար էր ասում. *«Վեկ ժիվի, վեկ ուչիս և էլ չենք շարունակում...»*, խորամանկորեն և չարաճճի ժպիտով: Եվ մենք բոլորս միաբերան ժպտալով ասում էինք. *«Այո, այո չենք շարունակում»*, նախ տակտի զգացողությունից, հետո՝ իմ (7 տարվա) և պարոն Թովմասյանի (40-ից ավելի տարիների) բաժնի վարիչն է եղել ՀՀ ռադիոյում, հետո բոլորը նրանից անվերջ սովորում էին և, վերջապես, շատ հարգում էինք նրա ազնվությունը, անմիջականությունը, առաքինությունը, մեծատառով հայ մարդու տեսակը: Մի անգամ Իրինա Տիգրանովան, ում հետ բարեկամներ էինք, և գրեթե, առանց այցելելու խմբագրություն տուն չէր գնում ասաց. *«Ձեզ մոտ շատ լավ տղամարդիկ են աշխատում, այնպիսին չեն: Եվ հանգիստ այցելում ենք»:* Բոլորս հասկացանք անմիջապես թե ինչ նկատի ուներ մեր սիրելին: Իսկ Աննա Բարսամյանը, որը բոլորիս դասավանդել էր և փոխադարձաբար մինյանց շատ սիրում էինք (առ այսօր պահպանում ենք կապը նրա ժառանգների հետ) հրատարակչությունն անվանում էր *«Կոնսերվատորիայի տաքուկ անկյունը»:*


Հրատարակչության հյուր, հոդվածագիր Թբիլիսիից՝ Մանան Կարապետյան, Գոհար Շագոյան, Հովհաննես Մուրադյան, Տաթևիկ Ամիրյան, Վալենտին Թովմասյան, Սոֆա Ազնաուրյան, «ԵՊԿ հրատարակչություն» 2009 թ.

Կարճ ժամկետով, սակայն ակտիվ գործունեությամբ և քննդատական հոդվածներով աշխատակցել է երաժշտագետ Լիանա Եղիազարյանը, տակավին բակալավրական ուսումն ավարտելուն պես: 2018 թվականին որպես խմբագիր և հեղինակ հանդես է եկել և խմբավար Գրիգոր Հարությունյանը: 2005-2012 թթ. համակարգչային շարվածքի աշխատանքները կատարել է Սուսաննա Ղուկասյանը:

2013 թվականի ապրիլից «Երաժիշտ» ամսաթերթը իրավունք է ստանում ըստ բնագրերի երկու լեզվով՝ հայերենով և ռուսերենով հրատարակելու, իհարկե գերակշռությունը՝ հայերենինն է: Ռուսերեն լեզվով հոդվածների պատասխանատու խմբագիրն է՝ խմբագիր, կոմպոզիոր Սոֆա Ազնաուրյանը, ով նաև իր հետաքրքիր հեղինակային հոդվածներով և հարցազրույցներով է ներկայանում ընթերցողին:

**Софа Азнаурян родилась в Краснодаре (Россия), там же с отличием окончила теоретико–композиторское отделение Краснодарского музыкального училища им.Н.А.Римского–Корсакова. Ее композиторский талант рано привлек к себе внимание: первый авторский концерт прошел в 1975 году. Дальнейшее обучение Софа Азнаурян продолжила в Ереванской государственной консерватории им.Комитаса в классе композиции проф. Г. И. Егиазаряна. Ее дипломной работой стала Поэма для сопрано и камерного оркестра на сл.К.Лепеджяна, исполненная Элладой Чахоян (дирижер Геворг Мурадян, фонд Радио РА).**

**Из характеристики проф.Егиазаряна: *“Софа Азнаурян проявила себя как талантливый композитор, обладающий отличным вкусом и профессиональной подготовкой. За годы учебы она создала целый ряд серьезных произведений, в которых проявилось ее образное мышление, своя гармоническая и мелодическая сфера. Два ее произведения записаны на Радио Армении и вошли в фонд”* (архив С.Азнаурян).**

**Еще в годы учебы С. Азнаурян удостоилась Диплома на Всесоюзном конкурсе молодых композиторов в Москве за вокальный цикл “Мгновение” на слова А. Мовсисян в исполнении Асмик Папян и автора. Камерность, стремление к психологизации образов, лаконизму формы во многом определило жанровую направленность сочинений Софы Азнаурян. С одной стороны, это пьесы для камерного оркестра, Фортепианное трио, блестяще исполненное Армине Григорян, Карэном Шахгалдяном и Кареном Кочаряном на авторском вечере композитора, прошедшем в Доме–музее Арама Хачатуряна, Виолончельная соната, Фантазия для контрабаса и камерного оркестра, с другой – вокальные циклы (на сл.Комитаса, М.Саркисяна), подготовившие в определенной степени 3 камерные оперы, написанные в период с 2004 по 2007 год, исполненные на нескольких театральных и музыкальных международных фестивалях (2004 – Международный фестиваль, посвященный 75–летию А.Тертеряна; 2005 – Международный театральный фестиваль“Айфест”; 2006 – Международный “Рождественский фестиваль” (Краснодар, Россия); 2007 – Международный театральный фестиваль “Арммоно”, 2009–РАМ им.Гнесиных (Москва, Россия), получившие широкий резонанс и оценку профессиональной критики –моноопера “Надежда” (по новелле З.Гиппиус “Вымысел” 2004), камерная опера “Армения” (по стихам и прозе О. и Н. Мандельштам, 2006), моноопера “Гамлет” (по У.Шекспиру, 2007), опера в 2–х действиях для детей “Приключения Нельзяйки” по одноименной повести Р. Марухяна (2014).**

7

# «Երաժիշտ» ամսաթերթը 15 տարեկան է



«ԵՊԿ հրատարակչության» այցելությունը Արարատյան հայրապետական թեմի Առաջնորդի Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությունը ստանալու (2014-ի հոկտեմբերի 10-ին ), Վալենտին Թովմասյան (2005-2014-ը Հրատարակչության բաժնի վարիչ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար), Հովհաննես Մուրադյան («ԵՊԿ հրատարակչության» խմբագիր, սրբագրիչ, և՛ «Երաժշտական Հայաստան»-ի, և՛ «Երաժիշտ» ամսաթերթի), Գոհար Շագոյան, Սոֆա Ազնաուրյան, Ջեմմա Գասպարյան (անգլ. տեքստերի թարգմանիչ-խմբագիր), Արմինե Աթոյան (լուսանկարը՝ «Երաժիշտ» ամսաթերթի գլխ. խմբ.)



Գրականագետ (սևակագետ, բանասիր. գիտ. դոկտոր), թատերագետ՝ Լիլիթ Արզումանյան, «Արաքսից այն կողմ» ֆիլմի ցուցադրումը ապրիլի 24-ին, հրատարակչության և «Երաժիշտ» ամսաթերթի ապրիլյան համարի շնորհանդեսին, 2010 թ.



Ծրագրավորող, դաշնակահար Հարություն Երիցյանյան (2006-2012 թթ. «ԵՊԿ հրատարակչության դիզայներ, գեղարվեստական խմբագիր), Լիլիթ Հովակիմյան (N 3, 2006-ի ամսագրի կազմի գեղարվեստական խմբագիր) «ԵՊԿ հրատարակչություն», 2008 թ.



Արմինե Աթոյան, Գոհար Շագոյան, Անուշ Կիրակոսյան (2018-ից առ այսօր՝ խմբագիր, «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար, ժուռնալիստ, քանոնահարուհի, ՀՀ ժուռնալիստների միության անդամ), «ԵՊԿ հրատարակչությունում», Նոր տարի - 2021 թվական

6

**Особое внимание уделяет композитор и сочинениям для детей: достаточно наз–вать “Цикл песен для детей”, “Семь песен для детей на армянские народные тексты”, о которых М. Рух–кян пишет: *“Степень искренности и постижение поэтической правды ори–гинала делает эти миниатюры твор–чески значительным делом. Наверное впереди их издание и обязательное распространение среди детей”.***



Սոֆա Ազնաուրյան, Գոհար Շագոյան, Գոհար Հովհաննիսյան («ԵՊԿ հրատարակչության» դիզայներ, գեղարվեստական խմբագիր, 2012 թվականից առ այսօր), 2019 թ.

**Не раз Софа Азнаурян обращалась и к детской фортепианной музыке: здесь автором охвачен широкий спектр жанров: танцевальных – “Та–нец”, “Вальс”; полифонических – 2–х, 3–х, 4–х голосные фуги; жанровых – “Игра”, “Скерцо”, в том числе Этюды и крупная форма – Сонатина в 3–х час–тях. *“Интересное неповторимое ху–дожественное качество в ее музыке предстает в облике благородной простоты, которая позволяет автору осуществлять поиск вытазительных средств, направленных на обогаще–ние мыслей и чувств любого человека, независимо от его возраста”* (проф. ЕГК Лилит Григорян). Одно из последних сочинений также для детей – музыка к драматическому спек–таклю–сказке “Наша Маша” (А. Гишян, 2020).**

**Произведения Софы Азнаурян регулярно исполняются в концертах пленумов и фести–валей СК Армении (член СК Армении с 1998 года). Некоторые из произведений изданы и входят в учебные программы ереванских музыкальных школ, училищ и консерватории. *“Творчество Софы Азнаурян,* – пишет Маргарита Рухкян, – *со всеми его сюжетами и темами как–то неожиданно, но закономерно обогатило современную армянскую музыку”.***

**Редакторская деятельность Софы Азнаурян началась в 1985 году в Краснодаре в дол–жности корреспондента–редактора музыкальных стереопрограмм краевого радио. Из ха–рактеристики зампредседателя Краевого телерадиокомитета В. А. Ламейкина: *“Глубокие и разносторонние знания в области классической и современной музыки помогли ей в подготовке таких программ, как “Выдающиеся исполнители прошлого и современности”, “Мастера оперной сцены” и др., которые не раз отмечались на летучках. Азнаурян С.М. творчески относилась к формированию и подаче музыкального материала, что позволило значительно расширить тематику и формы стереовещания”. "За годы работы, почти со дня основания, в журнале "Музыкальная Армения", а далее – в "Издательстве ЕГК" и газете "Еражишт", редактор Софа Азнаурян проявила себя как музыкант с широкой эрудицией, высоким профессионализмом, преданностью любимому делу. Через ее руки прошли деся–тки рецензий, информационных, философско–проблематичных статей, освещающих раз–нообразные процессы армянского музыкального искусства. Отметим и ее работу в качест–ве редактора выпусков "Сборника научно–методических статей" профессорско–препо–давательского состава ЕГК им.Комитаса, способствующую росту уровня статей преподавателей–исполнителей. Софа Азанаурян не только редактор с поистине филологическим знанием языка, но и автор статей, часто рождающихся в процессе***

15

**ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթի հոբելյանական տարվա առթիվ**

*Արդեն 15 տարի է, ինչ անդադար գործում է ԵՊԿ նախկին ռեկտոր, պրոֆսոր՝ Սերգեյ Սարաջյանի և «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր Գոհար Շագոյանի կողմից հիմնադրած «Երաժիշտ» ամսաթերթը: Այդ տարիների ընթացքում մեկը մյուսին փոխարինեցին մի քանի երաժշտագետ-գլխավոր խմբագիրներ՝ Աննա Գևորգյանը, Տաթև Ամիրյանը, Հասմիկ Համբարյանը, Շուշան Այվազյանը, իսկ մոտավորապես վերջին հինգ տարին ամսաթերթի գլխավոր խմբագրի պարտականությունը հաջողությամբ կատարում է արդեն խմբագրական փործ կուտակած, երաժշտագետ Արմինե Աթոյանը:*

*«Երաժիշտ» ամսաթերթն առաջին հերթին աչքի է ընկնում երաժշտական աշխարհում (նաև կոնսերվատորիայում) կայացած բազմազան իրադարձությունների պրոֆեսիոնալ լուսաբանմամբ, որոնք հագեցված են համապատասխան լուսանկարների հարուստ տեսլականով: Եվ այս ամենը ներկայացվում է հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուներով:*

*Սրտանց շնորհավորում եմ «Երաժիշտ» ամսաթերթի բոլոր ժամանակների խմբագրական կազմին և հոբելյանական տարեթվի առթիվ, ցանկանալով հետագա խաղաղ, ստեղծագործական կյանք, լեցուն հանրապետական և համաշխարհային արվեստի աշխարհի հետաքրքիր իրադածություններով:*

**ԿԱՐԻՆԵ ԶԱՂԱՑՊԱՆՅԱՆ**

***ՀՀ վաստակավոր գործիչ, Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր 17.12.2020 թ.***

**«Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակին**



Հասմիկ Համբարյան «Երաժիշտ» ամսաթերթի 2009-2012 թթ. գլխավոր խմբագիր

*2005-ից ի վեր դեկտեմբերի 25-ը՝ «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրման օրը, հատկանշական է հանրապետության միակ երաժշտական մասնագիտական մամուլն արժևորող անհատների համար: 15 երկար ու ձիգ տարիներին պարբերականն անցել է լուրջ փորձությունների ուղի՝ պահպանելով իր գլխավոր առաքելությունը՝ լուսաբանել ակադեմիական երաժշտության նորությունները, ինքնարտահայտման հարթակ տրամադրել երաժիշտ ուսանողներին և երաժշտական թեմաներով հոդվածագրերին, ճանաչելի դարձնել երիտասարդ երաժիշտների գործունեությունը, արծագանքել ԵՊԿ անցուդարձին, կամուրջ ստեղծել երաժշտական մշակութային հաստատությունների, մասնավորապես՝ երաժշտական թանգարանների հետ… «Երաժիշտ»-ը մշտապես բաց է եղել սփյուռքահայ հոդվածագրերի համար, իսկ վերջին արդեն ութ տարիներին ռուսերեն հոդվածների ընդգրկումը մամուլն ընկալելի է դարձրել նաև ընթերցողների համապատասխան շրջանակին:*

*Իբրև «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր աշխատելու հնարավորություն եմ ունեցել 2009-2012 թթ. (հրավիրվել էի տիկին Շագոյանի կողմից, որը ղեկավարում ենք մինչ օրս՝ երաժշտագետ-շրջանավարտներս): Դրանք ինձ համար եղել են ինքնաբացահայտման, մասնագիտական կայացման, երաժշտական աշխարհն ավելի խորքային ճանաչելու, առաջնակարգ երաժիշտների, պրոֆեսորների և մշակութային գործիչների հետ բարեկամական ու ստեղծագործական կապեր հաստատելու տարիներ: Չեմ ցանկանա երկար խոսել և նկարագրել այդ գեղեցիկ ու բովանդակալի տարիները, նաև չեմ փորձի գովաբանել ամսաթերթը: Անհրաժեշտ եմ համարում, շեշտել այն փաստը, որ այն հանրապետության միակ երաժշտական մասնագիտական մամուլն է, այդ պատճառով այն պետք է ոչ միայն պահպանել, այլև զարգացնել, տարածել, ընդգրկել նորանոր հոդվածագրերի, աջակցել նոր խորագրերի ստեղծմանը, նոր թեմաների արծարծմանը և վերջապես, ապահովել ընդարձակ օնլայն հարթակ (2012 թվականից խմբագրությունը փորձում է իրականացնել, սակայն անարդյունավետ, ստիպված ստեղծվել է ոչ ամբողջականորեն լուսաբանվող ֆեյսբուքյան էջ), որտեղ թերթը հասանելի կլինի նաև համացանցում:*

*Շնորհավորում եմ «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-տնօրեն, ով նաև հրատարակչության մեջ ներառված ամսագրի և ամսաթերթի, նաև ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդական հոդվածների ժողովածուի հիմնադիրն է, Գոհար Շագոյանին, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Աթոյանին, խմբագրության ամբողջ անձնակազմին՝ թերթի ուրախալի տարեդարձի առթիվ և մաղթում անխափան ու բեղուն աշխատանք: Թող «Երաժիշտ»-ն անպակաս լինի երաժիշտների և ոչ միայն երաժիշտների մշակութային կյանքից:*

**ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ**

***Երաժշտագետ, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող, «Երաժիշտ» ամսաթերթի նախկին գլխավոր խմբագիր, 25.12.2020 թ.***

# «Երաժիշտ» ամսաթերթը ստեղծման օրվանից մինչ այսօր

1 Ամսաթերթում լուսաբանվում է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երաժշտական կյանքը: Այստեղ անդրադառնում ենք տարբեր միջոցառումների, համերգների, նոր հրատարակությունների, նորությունների, ինչպես անվանի երաժիշտների, երաժշտական գործիչների ու մանկավարժների, այնպես էլ երաժիշտ-ուսանողների, երաժշտական ու արվեստի դպրոցների աշակերտների ելույթներին, գործունեությանը` խրախուսելով նրանց հաջողությունները:



*Քննադատական հոդվածի համար Արսեն Բաբաջանյանին և Սոնա Անդրեասյանին շնորհվեց «Գեորգի և Իրինա Տիգրանովների անվան» մրցանակ, «Ակումբ»- Թումանյան 40, 2010 թ.*

«Երաժիշտ» ամսաթերթում տարբեր տարիների ընթացքում ընդգրկվել են հետևյալ էջերը` «Հոգևոր երաժշտություն», «Համերգային կյանք», «Դպրոցի անկյուն», «Ուսանողի ամբիոն», «Բեմարվեստ», «Երախտավորները», «Հոբելյաններ», «Մրցույթներ, փառատոններ», «Հոգևոր էջ» (եկեղեցական տոների մասին մեծ սիրով նյութեր էր տրամադրում բուհերի հոգևոր պատասխանատու Գեղամ սարկավագ Ավետիսյանը), «Հայ կոմպոզիտորներ», «Գիտաժողովներ», «Գրական էջ», «Միջբուհական կապեր», «Միջդիսցիպլինար գիտություններ» ինչպես նաև Հովհաննես Մուրադյանի հեղինակած հոդվածաշարերը` «Դրվագներ հայ երաժիշտների կյանքից», «Մեկ երգի ստեղծման պատմություն», «Մեծերի իմաստախոսությունները» («Իմաստախոս Շեքսպիրը», «Իմաստախոս Հակոբ Պարոնյանը», «Վահրամ Փափազյանի իմաստուն խոսքերը» և այլն), «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Անահիտ Կիրակոսյանի «XXI դարի ուսանողի գիտելիքի զավեշտարան», Տաթև Ամիրյանի «Հիմնախնդիր» («Երաժիշտներին հուզող հիմնախնդիր հարցեր», հրատարակվել է մեկ անգամ և չի շարունակվել), Հովհաննես Դարբինյանի «Կատակում են երաժիշտները», Արմինե Աթոյանի «Մեծերը կանանց մասին», Անուշ Կիրակոսյանի «Ճանաչենք միմյանց», Հասմիկ Համբարյանի «Երիտասարդ երաժշտագետներ» հոդվածաշարերը: Ամսաթերթի նախաձեռնությամբ պարբերաբար հրատարակվում էին ուսանողների հարցադրումները արդի խնդիրների շուրջ, որոնց պատասխանում էին համապատասխան բաժինների պատասխանատուները (տես «Երաժիշտ» ամսաթերթի 2 (87) 2013 համարը): Գրեթե բոլոր համարներում ընդգրկվել են «Նոր հրատարակությունները» և «Երևանյան հայտարարությունները»:

**2008թ-ի լավագույն ուսանող հոդվածագրի համար «Երաժիշտ» ամսաթերթը սահմանել է մրցանակ` ամսաթերթի 1 տարվա բաժանորդագրություն**

**Աստղիկ Մանուկյան** (ԵՊԿ երաժշտագիտական բաժին, 5-րդ կուրս) - երաժշտական կազմակերպության գործունեությունը լուսաբանելու համար (տես` «Երաժիշտ» #7-8(32-33))

**Արմինե Աթոյան** (ԵՊԿ երաժշտագիտական բաժին, 3-րդ կուրս) -համերգային կյանքի լուսաբանման համար (տես` «Երաժիշտ» #11(36), #12(37))

**Շուշան Հյուսնունց** (ԵՊԿ երաժշտագիտական բաժին, 4-րդ կուրս) -գրախոսության համար (տես` «Երաժիշտ» #1(26))

**Անի Մուշեղյան** (ԵՊԿ երաժշտագիտական բաժին, 3-րդ կուրս) - մարզերի համերգային կյանքը լուսաբանելու համար (տես` «Երաժիշտ» #10(35))

**Գայանե Փանոյան** (ԵՊԿ երաժշտագիտական բաժին, 5-րդ կուրս) - մարզերի համերգային կյանքը լուսաբանելու համար (տես` «Երաժիշտ» #1(26))

**Աշոտ Բագրատյան** (ԵՊԿ լարային բաժնի ասպիրանտ) - հատուկ մրցանակ «Ամարաս» տպարանի կողմից «Հայկական ջազը 70 տարեկան է» (տես` «Երաժիշտ» #11(36)) հոդվածի համար:

*«Երաժիշտ» ամսաթերթը հաստատել է միջբուհական կապեր և թերթի էջերում տպագրել է նաև «Գլաձոր» համալսարանի ուսանողների հոդվածները:*

**Մարինե Հակոբյան** («Գլաձոր» համալսարան, լրագրության բաժին, 4-րդ կուրս) (տես` «Երաժիշտ» #2(27)):


1910 года. № 15. X-ый годъ. Суббота 20 Февраля.
ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ
Выходитъ отъ 1—3-хъ разъ въ недѣлю.

«Эриванские объявления» Հայերեն-ռուսերեն թերթիկի տիտղոսաթերթը

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

*Պահպանելով մամուլի բնագավառում եղած ավանդույթները, «Երաժիշտ» ամսաթերթի վերջին էջում տեղ գտած «Երևանյան հայտարարություններ»*

*խորագիրը թերթի հիմնադիր, երաժշտագետ Գոհար Շագոյանի մտահղացմամբ փոխառել ենք 1883-1917թթ.. Երևանում լույս տեսած «Երևանյան հայտարարություններ» թերթիկի անվանումից:*

*Հին Երևանի մամուլը սկզբնավորվել է ցարական Ռուսաստանի տիրապետության տարիներին, որի դերը բնակչության մտավոր և քաղաքական զարգացման գործում շատ խոստումնալից և կարևոր է եղել: 1883թ-ին սկսվում է «Երևանյան հայտարարություններ» թերթիկի հրատարակումը, որը բավական երկար կյանք ունեցավ` 1883-1917 թթ., հրատարակիչ-խմբագիրն էր մտավորական Էմին Տեր-Գրիգորյանը:*

*«Երևանյան հայտարարություններ» միայն խորագիրը պահպանելով զետեղեցինք «Երաժիշտ» ամսաթերթի վերջին էջում դարձնելով այն ավանդույթ (Այս թերթիկի մասին տես 11 (12) նոյեմբեր 2006 թ. համարում, էջ 4):*

*ՀՀ Մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, Հրատարակիչների ազգային ասոցիացիայի և «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ, 2008 թվականի հուլիսի 7-ին, Շառլ ազնավուրի անվան հրապարակում կայացավ «Գրքի համահայկական առաջին տոնավաճառ»ը:*

*Հայաստանում այդ օրը հրատարակչատպագրական գործունեություն իրականացնող շուրջ 100 հրատարակչություններից 37 մասնակիցների թվում էր և «ԵՊԿ հրատարակչությունը»` հիմնադիր-տնօրեն և գլխավոր խմբագիր, երաժշտագետ Գոհար Շագոյանի գլխավորությամբ:*

*տես 9(34)2008*



*ԵՊԿ հրատարակչության տաղավարին հյուրընկալել է Հրատարակիչների միության նախագահ Վահան Խաչատրյանը (կենտրոնում)*



*ԵՊԿ հրատարակչության տաղավարը «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր Աննա Գևորգյան*

Տարիների ընթացքում ամսաթերթին ակտիվ թղթակցել են երաժշտագետներ, կատարողներ, ԵՊԿ դասախոսներ, պրոֆեսորներ, ուսանողներ, հոդվածագրեր Սփյուռքի, ՀՀ մարզերի մշակութային օջախներից. Արաքսի Սարյանը, Նարինե Ավետիսյանը, Աստղիկ Հարությունյանը, Տիրան Լոքմագյոզյանը, Հասմիկ Էլոյանը, Մանուկ Մանուկյանը, Հռիփսիմե Մկրտչյանը, Լուիզա Մաթևոսյանը, Հրանտ Խաչիկյանը, Վարվառա Հովհաննիսյանը, Հովհաննես Դարբինյանը, Սահենիկ Մաղաքյանը, Վիկտորյա Փոշոտյանը, Անահիտ Կիրակոսյանը, Լիլիթ Եփրեմյանը, Մարգարիտ Սարգսյանը, Արտյոմ Անդրեասյանը, ինչպես նաև ամսաթերթի հավատարիմ հոդվածագիր, որը ստեղծման օրվանից մինչև այսօր թղթակցում է ամսաթերթին, ԵՊԿ թանգարանի վարիչ, երաժշտագետ Նանա Մարգարյանը: Ակտիվորեն բազմաթիվ հետաքրքիր հոդվածներով հանդես են եկել ԵՊԿ տարբեր տարիների ուսանողներ` երաժշտագետներ, կոմպոզիտորներ և կատարողներ: Լավագույն հոդվածագրերին «Երաժիշտ» ամսաթերթը պարբերաբար մրցանակներ է շնորհում. լավագույն քննադատական հոդվածների համար Սոնա Անդրեասյանին և Արսեն Բաբաջանյանին շնորհվել է Գեորգի և Իրինա Տիգրանովների անվ. մրցանակ:



*EXPO-2010 - Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ), Երևանի պետական կոնսերվատորիայի մասնակցությամբ ԵՊԿ-ի պավիլյոնի բացումը տեղի ունեցավ համերգային ծրագրով` ուսանողների կատարմամբ և հրատարակչական գործունեության ցուցադրությամբ, 2010-ին ԵՊԿ համակարգչային բաժնի վարիչ Աննա Հովհաննիսյան, Գոհար Շագոյան*

2004 թվականից «ԵՊԿ հրատարակչության հրատարակած ամբողջ գրականությունը մասնակցել է գրքի միջազգային ցուցադրություններին Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի` հանձինս Վահան Խաչատրյանի, շնորհիվ` Ֆրանկֆուրտում (տարվա ընթացքում մի քանի անգամ), Սանկտ-Պետերբուրգում, Եկատիրինբուրգում, Մոսկվայում (տարվա ընթացքում մի քանի անգամ), Աթենքում, Սալոնիկում, Նյու-Յորքում, Բոստոնում, Լոս-Անջելսում, Նովոսիբիրսկում և միջազգային գրքի փառատոներում, ինչպես նաև տարեկան *EXSPO* - ներում` կազմակերպված տարբեր երկրներում: Հատկանշական էր «ԵՊԿ հրատարակչության» մասնակցությունը 2012 թվականին «Երևանը միջազգային գրքի մայրաքաղաք հայտարարած և Հայոց գրատպության 500-ամյակին» նվիրված միջոցառումներին: Հատկապես նշանակալից էր, որ բացման արարողության ժամանակ հրատարակչությանը հատկացված էր 1-ին տաղավարը: Ցուցադրված էր բոլոր համարներով` մտավորականների պատկերազարդ կազմերով «Երաժշտական Հայաստան» ամսագիրը: Մեծ հոգածությամբ ՀՀ մշակույթի նախարարությունը պատշաճ ներկայացրեց ամսագիրը միջազգային պետական պատվիրակությանը:

Այդ մասին և երաժշտական մեկ տարվա կյանքն ամբողջական արտացոլվել է միայն «Երաժիշտ» ամսաթերթում, տարեկան կտրվածքով ամբողջ 2012 թվականին 1-12 համարներում:

Հրատարակվում են նաև ԵՊԿ ամբիոնների, պրոֆեսորների տարեկան հաշվետվությունները, նրանց գործունեության, կատարած աշխատանքի ամբողջական պատկերն արտացոլող հոդվածներ:

2018 թվականի բոլոր համարներում ընդգրկվեցին ԵՊԿ դասախոս Սարգիս Հովհաննիսյանի մանրամասն ցուցումներն ու բացատրությունները *Mus Score* նոտային հավաքչական համակարգով աշխատելու վերաբերյալ: Տպագրվում են նաև երաժիշտ ուսանողների հոդվածներ հայտնի նկարիչների ցուցահանդեսների մասին. Զոյա Սարգսյանի հոդվածը 1(157)2019 համարում, նաև ԵՊԿ ուսանողական ամենամյա գիտաժողովներում մասնակցողների լավագույն նյութերը: Համավարակի պայմաններում 2020 թվականի ընթացքում ԵՊԿ-ում շատ ակտիվ հեռավար անցկացվել են գիտխորհուրդները, դասերը և ավարտական քննությունները:

2013 թ. ապրիլից ամսաթերթը դարձավ եռալեզու. Սկսվեցին տպագրվել նաև ռուսերեն ու անգլերեն լեզուներով հոդվածներ. ռուսերեն հոդվածների խմբագիր Սոֆա Ազնաուրյանի խոսքով.

**Авторами статей для газеты являются именитые музыканты: композиторы, исполнители, музыковеды, дирижеры, музыкальные критики. Светлана Саркисян, часто со статьями о музыкальной жизни Армении и зарубежных новостях, основанных на личном участии в многочисленных зарубежных конференциях и форумах; Маргарита Рухкян, как всегда держащая руку на пульсе музыкальных событий; Сарине Автандилян об арцахских премьерах опер А. Бабаева (“Арцваберд”) и А. Тертеряна (“Огненное кольцо”); Саеник Магакян со своей рубрикой “Концертмейстеры Армении”; Маргарита Багдасарян (АГПУ) со статьями о гастролях армянских музыкантов и творческими портретами композиторов–современников; Нина Акопян (НКР), освещающая музыкальную жизнь Арцаха; Маргарита Саркисян, пишущая о выдающихся педагогах**

9

# «Երաժիշտ» ամսաթերթը ստեղծման օրվանից այսօր

8

**–вокалистах ЕГК; Софья Микаелян, с новинками музыкальной жизни Санкт–Петербурга; Саркис Оганесян с рекомендациями молодым музыкантам по работе с программой “Muse Score”; Нана Маргарян с многочисленными отчетами о концертах, памятных вечерах в Ереване и по всей республике.**

**Из зарубежных авторов можно отметить Рубена Тертеряна (Эквадор), всегда откликавшегося на события в Армении; Маргариту Овсепян (Краснодар, РФ) о концерте, посвященном Комитасу в стенах Кубанского института культуры и др.**

**В газете были напечатаны блестящие статьи мэтра армянской журналистики, писательницы и поэтессы Нелли Саакян о Бетховене и Арно Бабаджаняне; стихи и переводы Каринэ Халатовой (Дереник Демирчян – “Кинто”, “Еражишт”), режиссера музыкального театра Виктории Пошотян об отечественном оперном искусстве; театроведа Натальи Асмарян о деятельности Оперного театра.**

**Часто появляются статьи редактора Софы Азнаурян, в частности о концертах (“Гия Канчели: бездна простых тем”, “Элисо Болквадзе: талант с французским шармом”), к юбилейным датам (“История еврейского народа, записанная нотами”), рецензии на новые издания (“Не петь я не мог” о творчестве Э. Багдасаряна, о книгах Нины Акопян, подаренных библиотеке и издательству ЕГК) и др.**

Ամսաթերթի «Գրական էջ»-ում տպագրվում են գրողների, գրող-երաժիշտների բանաստեղծություններ, պատմվածքներ և էսսեներ: Նրանցից են՝ Հայկական բանակի պահեստազորի սպա՝ մայոր Միշա Անտոնյանը, Հայկական բանակի պահեստի սպա՝ մայոր, ԵՊԿ փականագործ, հետախույզ Լաչին Ստեփանյանը, օպերային երգիչ Արկադի Մարտիրոսյանը, թարգմանիչ, բանաստեղծ և գրող Կարինա Խալատովան, կոմպոզիտոր, կոմպոզիտոր, ԵՊԿ պրոֆեսոր Միխայել Կոկժաևը, ԵՊԿ պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանը, ԵՊԿ ուսանողներ՝ Զոյա Սարգսյանը, Շիրազ Այարյանը, Անի Գաբրիելյանը, Արմավիրի քաղաքապետարանի երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանի աշակերտուհի Հասմիկ Մկրտչյանը: Ինչպես նաև ընդգրկվում են բանասեր-գրողների՝ Լուսինե Թոփուզյանի, Արմինե Կարեյանի, Սվետլանա Ավակյանի, Հրաչյա Բալոյանի, Հասմիկ Սարգսյանի հոդվածները երաժիշտների ու երաժշտության մասին:



*Ուխտագնացություն Գուգարաց և Շիրակի շրջաններ, կազմակերպիչ Կարինե Բրուտյան և հյուրեր, Արդվի գյուղում հանդիպեցինք, Աստծո կամոք, երկու սրբազանների՝ թեմի առաջնորդ, ով մեզ օրհնեց՝ երջանկահիշատակ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արքեպս. Չուլջյանը և Շիրակի թեմի Տ. Միքայել արքեպս. Աջապահյանը, կաթողիկոսի դամբարանից դուրս գալիս մենք պետք է դեռ գնայինք աղոթելու և Պատարագից հատվածներ կատարելու, Արդվի գյուղի VII դ. Սուրբ Հովհաննես եկեղեցու բակում, 2018 թ.*

Ընթերցողին է ներկայացվում Երևանի պետական կոնսերվատորիայում տեղի ունեցող տարբեր իրադարձությունների, «ԵՊԿ հրատարակչության» կազմակերպած ամենամյա շնորհանդեսների, հանդիպումների, միջոցառումների, ինչպես նաև դեպի Հայաստանի տարբեր եկեղեցիներ ուխտագնացությունների մասին:

Ամսաթերթում ամեն տարի անդրադարձ է կատարվում Հայոց Ցեղասպանությանն առնչվող թեմաներին, այդ թվում նաև ապրիլի 24-ին «ԵՊԿ հրատարակչության» աշխատակազմի և ԵՊԿ ուսանողների՝ Երևանի ազգային պանթեոն այցելությունների մասին (այդ ավանդույթին սկիզբ է դրվել դեռ 2001 թվականին Գոհար Շագոյանի ջանքերով, «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրությունով առաջին անգամ այցելությամբ: Այնուհետև 2007-ից ապրիլի 24-ին, կամ էլ միանում էինք ջահերով երթին՝ 23-ին, Հայ ֆոլկլորագիտության երաժշտության ամբիոնի դասախոս Կարինե Բրուտյանի կազմակերպմամբ հոգևոր երգի և ֆոլկլոր դասընթացների գործնականում ինչեցումը: «Ուխտագնացություն Հոգևոր երգի երթով» ինչպես գրեց հետագայում իր հոդվածներում Գ. Շագոյանը:



*Ուխտագնացություն Արմավիրի մարզ, կազմակերպիչ Կարինե Բրուտյան, Տ. Մարկոս սրբազանը ողջունում է ԵՊԿ ուսանողությանը Արմավիր քաղաքում Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու բացմանը, բարերար Կարեն Մկրտչյան, ով հետագայում Ա. Տերտերյան փառատոնի հովանավորը դարձավ*



*ԵՊԿ ուսանողական «Գուսան» երգչախումբը (խմբավար Ռ.Միքայելյան) և «Գլաձոր» համալսարանի լրագրության ֆակուլտետի 4-րդ և 5-րդ կուրսի ուսանողներն ու դասախոսները «Հաղարծին» վանահամալիրում, 2007 թ.*

*2007 թ. հոկտեմբերի 14-ին Երևան-Էրեբունի տոնի շրջանակներում «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր տնօրեն Գ.Շագոյանի ղեկավարությամբ, «ԵՊԿ հրատարակչության» կազմի, համատեղ «Գլաձոր» համալսարանի, «Նոր Գլաձոր» ամսաթերթի խմբագրության, Լրագրության ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ իրականացավ ուխտագնացություն Հաղարծին և Գոշավանք: Կոնսերվատորիայի ուսանողների կազմակերպված համերգը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 138-ամյակին, ղեկավար՝ ԵՊԿ դասախոս Կարինե Բրուտյան, որոշ համարների կրճատումով ինչեց նաև ՀՀ Կոմպոզիտորների և երաժշտագետների միության Դիլիջանի ստեղծագործական տանը և նվիրվեց միության 75-ամյակին: Ուղևորությունն իրականացավ Մոնջյան բարեգործական հիմնադրամի նախագահ պրն. Ռ. Կոզմոյանի աջակցությամբ (տես 10(23)հոկտեմբեր 2007 թ. համարում էջ 1, 3)*



*«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրության խոնարհումը Հայոց Ցեղասպանության զոհերին, Ծիծեռնակաբերդ, 2001 թ.,*



*ԵՊԿ հրատարակչությունը միավորված հյուրերի և ԵՊԿ ուսանողության հետ, դասախոս՝ Կարինե Բրուտյանի և Գոհար Շագոյանի ղեկավարությամբ Եղեռնի զոհերի հիշատակի տուրք են տալիս Ցեղասպանության թանգարանում և հոգևոր երգով խնկարկում, Ծիծեռնակաբերդ, 2007թ.*

*Այս տարի ապրիլի 24-ին հայ հանրությունը ցավոք չկարողացավ այցելել սրբադասված զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, քանի որ համավարակի տարածումը կանխելու նպատակով փակվել էր հուշահամալիրի մուտքը: Հայոց Ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցելեցին միայն Հայաստանի վարչապետը, Նախագահը, Ազգային ժողովի նախագահը, Արցախի նորընտիր Նախագահն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Չնայած այս ամենին, կառավարությունը ձեռնարկել էր Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ, որոնց սկիզբը դրվեց ապրիլի 23-ին. երեկոյան 21.00-ին եկեղեցական զանգերի ղողանջների ներքո լուսավորվեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, մարեցին Երևանի և մարզկենտրոնների փողոցների լույսերը: Կոչ էր արվել մարել բնակարանների լույսերը ու սևեռել հայացքները դեպի Ցեղասպանության զոհերի հուշահամալիր, և մոմերի կամ բջջային հեռախոսների լույսերի ներքո պատուհաններից խորհրդանշել միասնական ներկայությունն անմար կրակի շուրջ: Իսկ ապրիլի 24-ին, ժամը 8.00-ից սկսած՝ քաղաքացիները կարող էին հաղորդագրություն ուղարկել 1915 կարճ համարին (Հայաստանից) և 0037433191500 հեռախոսահամարին (արտասահմանից)՝ իրենց անվամբ հաստատելու հեռակա մասնակցությունն օրվա խորհրդին: Հաղորդագրությունն ուղարկած քաղաքացիների անունները լուսապատկերի միջոցով արտացոլվեցին հուշահամալիրի սյուներին: Ի դեպ, նշենք, որ հուշահամալիրի լուսային ձևավորման գաղափարի հեղինակը C-squared-ն է, որը զբաղվում է ոչ ստանդարտ տեխնիկական, լուսային նախագծերի լուծումներով, անիմացիաների պատրաստմամբ և այլն (տե՛ս «Երաժիշտ» # 4 (172) ապրիլ 2020):*

Ամսաթերթը համագործակցում է Զաջուռի՝ Մինասի, և պարբերաբար՝ Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ի, Ա. Խաչատրյանի և Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանների հետ՝ հոդվածներով հանդես են գալիս Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի աշխատակից Աննա Ասոյանը, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տարբեր տարիների աշխատակիցներ՝ Տիգրան Սարգսյանը, Նվարդ Ստեփանյանը, Հասմիկ Համբարյանը, Աստղիկ Հարությունյանը, Ինեսսա Խաչատրյանը:

Թբիլիսցիների միջազգային ակումբի ***«Тбилисцы»*** թերթի հետ համագործակցության շնորհիվ, ի դեմս հասարակական կազմակերպության նախագահ, հայտնի ռեժիսոր և մտավորական Էդուարդ Եդիկիսիլովի և թերթի խմբագիր, թատերագետ և «Երաժիշտ» ամսաթերթում բազմաթիվ հոդվածների հեղինակ Նատալյա Ասմարյանի հաստատեցինք նաև ստեղծագործական կապեր ժուռնալիստ Լուսինե Թոփուզյանի հետ, որի «Մեծաց շարունակվող զրուցաշար. Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքի շնորհանդեսը լուսաբանվեց թերթում, և պարբերաբար հրատարակում ենք հոդվածներ այդ գրքից՝ նվիրված արվեստագետներին:

«ԵՊԿ հրատարակչությունը» և «Երաժիշտ» ամսաթերթը տարիների ընթացքում ձեռք են բերել նվիրյալ բարեկամներ, որոնց հետ նաև ակտիվ համագործակցել են՝ հասարակական գործիչ ու խմբավար, կոմպոզիտոր, անվանի երաժշտագետ Գրիգոր Փիթեճեանը (ԱՄՆ), Էդվարդ Միրզոյանը, Իրինա Տիգրանովան, Խորեն Պալյանը, Արաքսի Սարյանը, Շուշանիկ Ափոյանը, որոնք ցավոք այլևս մեզ հետ չեն: Հարազատ մարդիկ են նաև՝ Մեդեա Աբրահամյանը, Կարին Հելմանը (Շվեդիա), Էդվին Ալեմշահը (Սիդնեյ), Մանանա Կարապետյանը (Վրաստան), Միհր Բեգլարյանը (Գերմանիա), Նավասարդ Սրբազանը, Սերգեյ Սարաջյանը, Հրանտ Խաչիկյանը, Ալինա Փահլևանյանը, Մարգարիտ Ռուխկյանը, Սվետլանա Սարգսյանը, Դանիել Երաժիշտը, Դավիթ Ղազարյանը, Տիրան Լոքմագյոզյանը, Ռուբեն Գալիչյանը և այլոք:

*Նյութը պատրաստեց*
**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**

# ԳՈՌ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ հիշատակին



*Գոռ Թումանյան, ԵՊԿ, լսարանում, 2018 թ.*



*Գոռ Թումանյան «Ոսկե ձայն», Ոսկե մեդալակիր, Ստամբուլ, 2018 թ.*



*Համերգի մասնակիցներ՝ Գոռ Թումանյանը և Հովհաննես Կարապետյանը, պրոֆեսոր՝ Կարինե Մկրտչյանի հետ, «Ռ. Մելիքյան. Ռոմանսի երեկո», Առնո Բաբաջանյանի անվ. ֆիլհարմոնիկ համերգասրահ, Երևան, հոկտեմբեր, 2017 թ.*



*«Ոսկե ձայն» միջազգային մրցույթի Ոսկե մեդալակիր՝ Գոռ Թումանյան (B), Երևան, հուլիսի 14-16-ը, 2017 թ.*

1

Այդ իսկ պատճառով լուսաբանվում էր «Երաժիշտ» ամսաթերթում: Կամ ակտիվորեն մասնակցում համերգային ծրագրերի, որոնցից մի քանիսը ներկայացրել եմ և վարել: Օրինակ՝ 2017 թվականի հոկտեմբերի 1-ին Երաժիշտների միջազգային օրվա առթիվ նաև Ռումանոս Մելիքյանի ծննդյան օրը (նրա 132-րդ տարեդարձն էր) զուգադիպած Երևանի 2798-րդ տարեդարձին կազմակերպվել էր Ռոմանոս Մելիքյանի «Ռոմանսի երեկո» Առնո Բաբաջանյանի անվ. ֆիլհարմոնիկ համերգասրահում և նաև Կարեն Զոհրաբյանի հեղինակությամբ և ջանքերով ԵՊԿ ուսանողների հետ միասին: Առաջինը բեմ հրավիրվեց և հետաքրքիր զուգադիպությամբ ծրագրի 1-ին և վերջին ռոմանսը «Աշնան երգ»-ն էր սիրված ու ժողովրդականություն վայելած: Տողերիս հեղինակը մեծ սիրով ներկայացրեց տարբեր սերունդների երգիչների համերգի բացումն ու փակումը. նույն ռոմանսի մեկնաբանումներն էին: Մտածածին չէր, սակայն, դա այդպես եղավ: Երկու կատարումներն էլ չքնաղ էին և չէին զիջում միմյանց այդտեղ էլ նկատվեց Գոռ Թումանյանի տաղանդը: 1-ին կուրսեցի, 17-ամյա գեղեցիկ թավշյա բաս ձայնը չզիջեց հասուն շրջանավարտի օպերային երգչի կատարմանը: Բոլոր կատարումները նվագակցում էր անվանի դաշնակահար Ա. Սպենդիարյանի անվ. ազգային ակադեմիական օպերայի և բալետի թատրոնի վաստակաշատ կոնցերտմայստեր Վասիլի Օլեգի Ռոլիչը:



*Գոռ Թումանյանը հոր՝ Սեյրան Թումանյանի հետ*

Դեռ 15 տարեկանում Գոռ Թումանյանը մասնակցել է «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին արժանանալով դափնեկրի կոչման՝ 1-ին մրցանակի, նաև «Տենոր» ասոցիացիայի, ղեկավար՝ Կարեն Զոհրաբյանի կազմակերպած մրցույթի մրցանակակիրն է: Երիտասարդ մեներգիչը մասնակցել է նաև Իսպանիայում՝ «Հարուստ ձայն» միջազգային մրցույթին և 1-ին մրցանակիրը դարձել:

Նա սովորում էր գերազանց, հետաքրքրասիրությամբ, որի մասին համերգին վկայեցին նրա դասախոսները՝ Հասմիկ Էլոյանը՝ ժողովրդական երգի վերծանություն, որ սիրով է կատարել Գոռը և Կարինե Բրուտյանը՝ հոգևոր երգի և ֆոլկլոր դասընթացների մասնագետները: Իսկ Կարինե Մկրտչյանի խոսքը հուզիչ էր մայրական գորովանքով լեցուն և անհուն վշտով իր զոհված հերոսացած սանի համար: Համերգային կատարումներով հանդես գալուց առաջ նրա ընկերները իրենց խոսքն էին ուղղում Գոռին: Նրանց ընկերոջ կորուստն անսփոփելի է միայն երգով, հիշելով և նվիրական կատարումներով երաժշտությամբ կարող ենք հավերժացնել անգին երիտասարդների կորուստը:

Համերգին ներկա ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանն իր գորովալից խոսքն ուղղեց և՛ Գոռի ծնողներին, և՛ ընկերներին, և՛ ներկաներին: Ջերմ էր մարդասիրությամբ և արվեստով լեցուն մթնոլորտը:

Հիշենք Գոռի կատարումները, որոնք ձայնագրություններով հնչեցին որպես համերգի մասնակից և ներկայով էի ներկայացնում Գոռ Թումանյանի կատարումները:

2017 թվականի Երևանյան շոգ ամառային օրերին, հուլիսի 14-16-ը երաժշտասեր հանրությունը մասնակցեց «Ոսկե ձայն» միջազգային մրցույթին: Մրցույթը, որն իրականացավ «Տենոր» ասոցիացիայի կազմակերպությամբ, կայացավ Առնո Բաբաջանյան համերգասրահում: «Ոսկե ձայնը» անցկացվում է երկու տարին մեկ և այս տարի իրականացվում էր 2-րդ անգամ: Առաջին մրցույթն անցկացվել է 2015 թվականին, որի ժամանակ «Տենոր» ասոցիացիայի նախագահ Կարեն Զոհրաբյանը խոստացել էր հետագայում ավելացնել սահմանված մրցանակները: Այն իրականացավ, մասնավորապես Կ. Զոհրաբյանի ջանքերով: Նա տեղեկացրեց, որ հայտերը շատ էին, կային մասնակիցներ նաև արտերկրից, սակայն նախնական լսումների արդյունքում ընտրվածները 26-ն են՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Վրաստանից, Ուկրաինայից, Հայաստանից: Հաղթողներ ճանաչվեցին՝ Ոսկե մեդալակիրներ Արման Նիկոլյանը (E), Հովհաննես Անդրեասյանը (D), Գոռ Թումանյանը (B), վրացի Ալեքսանդր Սադունիշվիլին (A) - դասական անվանակարգում:

Եվ բացվեց համերգը Գոռ Թումանյանի ձայնագրությամբ. Կալդառա՝ Արիա «Սեբեն Քրուդելե»:

Այնուհետև նրա ընկերները կատարեցին հուզվածությունը հազիվ-հազ զսպելով Կոմիտաս՝ «Ախ, մարալ ջան», «Էրվում եմ», Ա. Մայիլյան՝ «Ծովի երգը» կատարում էր նրա ավագ ընկերը՝ Հովհաննես Կարապետյանը, իր խոսքում նա նշեց. «*Մենք միասին պարապում էինք մասնագիտություն կոնսերվատորիա ընդունվելու համար և այդ ժամանակվանից մտերմացանք: Չնայած ես տարիքով մեծ էի, բայց մենք ընկերություն էինք անում, միմյանց դասերը լսում, որը շարունակվեց նաև ուսանող դառնալուց հետո նույն պրոֆեսորի դասարանում, միմյանց դիտողություններ ու կարծիք հայտնում մեր կատարումներից: Նա, չնայած իր տարիքին, շատ հասուն անձնավորություն էր և մեր ընկերությունը բարեկամության վերածվեց*»:

Դ. Ղազարյանի «Ուռին», Ռ. Մավիսակալյանի «Կապույտ մանուշակ» երգերը կատարեց Հարություն Հովհաննիսյանը:

Հայրենասիրական «Հոր-հոր աղայի քառյակները» Տ. Չուխաջյան՝ «Կարինե» օպերետտից իր գեղեցիկ բարիտոնբաս ձայնով հնչեց Գոռ Թումանյանի կատարմամբ:

Համերգում հնչած ստեղծագործությունների բովանդակային կողմին մեծ ուշադրություն էր դարձրել դասախոսը Կ. Մկրտչյանը, որ մորմոքում և պատմում էին այդ երգերը մարդկային կյանքի ու հույզերի մասին:

Նորից հիչում և մորմոքում է Կոմիտասը. «Ծիրանի ծառ»-ը կատարեց 1-ին կուրսեցի Նարեկ Բալդրյանը:

Կոմիտաս՝ «Չինար ես», Պ. Աֆրիկյան «Մայր Արաքսի ափերով» Միքայել Սարգսյանի մեկնաբանությամբ ունկնդիրը տեղափոխվեց մեր հայրենի եզերքը:

Հոտնկայս ամբողջ դահլիճը ունկնդեց տեսահոլովակի վերածած զոհված հերոսացած զինվորների լուսանկարներով Գոռ Թումանյանի վերջին Երգը խրամատում «Կյանք ու կռիվ»:

Միայն Կոմիտասով («Քելեր, ցոլեր») կամոքվեինք կանանց ձայնով և օրորոցայինով՝ Բ. Կանաչյան «Օրոր» Վարդուհի Ենոքյանի կատարմամբ:

Համերգին ներկա էր նաև իր համադասարանցին՝ Նարեկ Ադամյանը, սակայն հիվանդության պատճառով չկարողացավ ելույթ ունենալ, ներկա էր նաև զինվոր վիրավորված մարտում դաշնակահար, բակալավրական ուսուցման շրջանավարտ Արտյուշա Երզնկյանը:

Հովհաննես Կարապետյանիը իր բացառիկ կատարումով հնչեցրեց Կոմիտասի «Ալագյազ» և «Մոկաց Միրզա» էպիկական երգերը:

11



*Արտյոմ Ասմանգուլյան, երաժշտագետ և կազմակերպիչ Գոհար Շագոյան, Սեյրան և Մարինե Թումանյաններ, Վարդուհի Ենոքյան, ԵՊԿ պրոֆեսոր Կարինե Մկրտչյան, կոնցերտմայստեր Քրիստինե Սիմոնյան, Հարություն Հովհաննիսյան, Նարեկ Բալդրյան, Հովհաննես Կարապետյան, մաեստրո Սեդրակ Երկանյան*



*Հասմիկ Էլոյան*



*Կարինե Բրուտյան*



*Միքայել Սարգսյան*

## Գ Ո Ռ   Թ Ո Ւ Մ Ա Ն Յ Ա Ն Ի   հ ի շ ա տ ա կ ի ն


Սոնա Հովհաննիսյան


Հովհաննես Կարապետյան


Հարություն Հովհաննիսյան


Կարինե Մկրտչյան


Գոհար Շագոյան


Վարդուհի Ենոքյան

10

Հուշ երեկոն ավարտվեց Գոռի կատարումով Ա. Սպենդիարյանի «Այ վարդը» ռոմանսով:

Առանց հուզումը և ցասումը թաքցնելու ելույթ ունեցավ հրավիրված մաեստրո Սեդրակ Երկանյանը:

Հուզառատ էինք բոլորս՝ թե ծնողները Սեյրան և Մարինե Թումանյանները մայրիկը, որ եղել է Գոռի վոկալի առաջին ուսուցիչը Ուջանի երաժշտական դպրոցում, եղբայրը Սամվելը: Այդ դպրոցի տնօրենը Ֆելիքս Արշակյանն է, ով նաև վաղամեռիկ Լուսյա Թունյանի ամուսինն է, ներկա էր սիրելի սանի հիշատակի երեկոյին: Գոռի ձայնագրություններում նվագակցում էր Լ. Թունյանը: Հանդիպումն ավարտվել էր թե՛ ռեկտորը, թե՛ մասնակիցներս, թե՛ ծնողները, և նաև լեփլեցուն դահլիճը նույնպես երկար չէին կարողանում հրաժեշտ տալին մեկ մեկու:

Հավելենք, որ սիրով և ակնածանքով տեխնիկայի հարցում օգնեցին Արտյոմ Ասմանգուլյանը, լուսանկարիչ՝ Անի Յուխանյանը և Ակուստիկ լաբորատորիայի վարիչ՝ Սերգեյ Ումրոյանը:

Հ.Գ. Արցախյան պատերազմում մասնակցել են ԵՊԿ-ից շուրջ 60 ուսանողներ, չորս զոհ են ունեցել նաև երգիչ վադեմի շրջանավարտ Գևորգ Հաջյանը, ունենք շուրջ տասնյակ վիրավորներ, որոնք ապաքինվում են, ցավոք լուր չունենք Ուսանողական խորհրդի նախին նախագահ, ակադեմիական երգեցողություն բաժնի մագիստրոսական 1-ին կուրսի ուսանող՝Գագիկ Խաչատուրյանից:

**ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ**
***Երաժշտագետ,***
***«ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ,***
***«Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր,***
***թողարկման պատասխանատու***

## *Ծովինար Չալոյանի դասախոսությունները*
## «Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

***Հաշվի առնելով ԵՊԿ պրոֆեսոր, գեղագիտության և արվեստի սոցիոլոգիայի մասնագետ Ծովինար Չալոյանի ցանկությունը, որը նա արտահայտել էր ամսաթերթի ստեղծման առթիվ իր շնորհավորականում. «Հանճարեղ Սոկրատեսն առաջինն էր, որ ասաց. «Մարդը պետք է գեղեցիկ լինի ոչ միայն արտաքինով, այլև՝ հոգով և իմացական կարողությամբ (kalos-kagatos)»: Մեր կոնսերվատորիայի թերթի առաջին համարի լույս ընծայման առիթով մաղթում եմ աստիճանաբար ձգտել դեպի կատարելություն թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ: Ցանկալի է, որ յուրաքանչյուր համարում թերթն ունենա մի անկյուն, որտեղ խոսք լինի գեղագիտական դաստիարակության մասին՝ նպատակ ունենալով ավելի բարձր պահել հայ երաժշտի և մտավորականի պատիվը», այս հոբելյանական համարում սկիզբ ենք դնում իր «Ծովինար Չալոյանի «դասախոսությունները»» խորագրով էջին, որտեղ կընդգրկվեն գեղագիտության պատմության և դաստիարակության մասին նյութեր: Դրանով հավերժացնում ենք նրա հիշատակը գրատպության միջոցով, որի անխոնջ մշակն է եղել նա:***

***խմբագրական***

1

*«Տեսնելու ընդունակության պակասը հիմքն է բոլոր գեղարվեստական սահմանափակումների և անհաջողությունների»:*

ԹԵՈՖԻԼ ԳՈՏԻԵ
*XIX դ. իդեալիստ և ռոմանտիկ*

Արևելյան Նեոլիթյան հեղափոխությունը (12 000-10 000 Ք.Ծ.ա.) հանգեցրեց նրան, որ տարբեր ցեղեր ոչ շատ մեծ տարածքներում ձևավորեցին միգրացիոն գործընթաց՝ ստեղծելով որոշակի բնակավայրեր, մշակեցին հողը, գրավեցին ջրառատ վայրերը: Աշխարհագրորեն այդտեղ կային երկու լեռնաշղթաներ՝ Հայկական և Իրանական: Այդ ցեղերի տարրալուծման մեջ է և մեր հայկական հետքը: Բաբելոնա-աքքադական Գիլգամեշի մեջ ասվում է, որ Նոյի (Ութնապիշտման) նախնիները լեռնային մարդիկ էին: Գրված է, որ Նոյը հասկացավ՝ ջրհեղեղից հնարավոր է փրկվել միայն բարձր սարերում: Կա կարծիք, որ Նոյը ծագումով իրանական սարերից էր: Հայկական տարածքում ընտելացվել էր ձին, որին շումերները կոչում էին էշ կամ ավանակ՝ եկած հեռավոր լեռնային երկրից: Հայտնի է, որ Տիգրիս, Եփրատ գետերն իրենց սկիզբն առնում են պատմական Հայաստանի տարածքից: Միջագետքում տարածվում են Հայկական լեռնաշխարհում աճող ցորենը և գարին: Նույն գետերով Միջագետք են իջնում լեռներում ձևավորված աշխատասեր, գործունյա մարդիկ:

Միջագետքը մինչև այսօր հարուստ է նավթով: Հին աշխարհում նա այն խփում էր շատրվանով, երբեմն ինքնաբոցավառվում, ինչը հնարավորություն էր տալիս դեռևս նախամարդուն օգտվելու այդ կրակից: Այդ տարածքում ստեղծվեցին առաջին կրակները, հետո թոնիրները, որոնք ցուրտ գիշերներին տալիս էին ջերմություն և կերակուր պատրաստելու հնարավորություն:

Մարդկության ամբողջ պատմության փորձը վկայում է այն մասին, որ մարդ էակի խնդիրներն էին՝ հող մշակել, հաց թխել, մետաղ ձուլել, կառուցել տներ, ուր նույն հարկի տակ կարող էր ապրել մոնոգամ ընտանիքը՝ իր բարոյական օրենքներով: Այս ամենը Հին աշխարհի բարձրագույն ծրագրերն էին, որոնք հայերը փորձել են տարածել:

1996 թ. լենինգրադցի գիտնական, մաթեմատիկոս Բորիս Մոյշեզոնի «Արմենոիդները հին աշխարհի արիստոկրատներն են» գրքում կարդում ենք, որ արմենոիդները 1000-ամյակներ առաջ կազմել են արիստոկրատ դասակարգ՝ խաղալով կենտրոնական դեր հնագույն քաղաքակրթությունների ձևավորման և տարածման հարցում:

Գերմանացի գիտնական Ալեքսանդր Հումբոլդտը Հայաստանն անվանում էր անտիկ աշխարհի ծանրության կենտրոն, քանի որ այն եղել է հնագույն քաղաքակրթությունների կենտրոնում:

III հազարամյակում Ք.Ծ.ա. Արևելքում Սարգոն Աքքադցուց և Նարամսինից պահպանված սեպագրերի մեջ նշված է «Արմենների երկիր» անվանումը: Ավելին, Հյուսիսային Սիրիայի էբլ քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերված նույն հազարամյակի սեպագիր գրություններում բազմաթիվ անգամ կրկնվում են «հայ ցեղը», «հայ երկրից», «Արմի տարածքից» կամ էլ «քսան ոսկուց մեկը տրվում է հային» բառակապակցությունները: Հարց է ծագում՝ կայի՞ն արդյոք III հազարամյակում Ք.Ծ.ա. ուրիշ ցեղեր արմի, արմեն, հայ անվանումներով: Գիտությունն արդեն պարզել է, որ չկային: Պատմական փաստ է նաև, որ Սարգոն Աքքադացին XXIV դարում (Ք.Ծ.ա.) նվաճել է էբլ քաղաք-պետությունը: Թագավորական դամբարանների անտրոպոլոգիական հետքերը և՛ Եվրոպայում, և՛ Ասիայում հաստատում են այն փաստը, որ հնագույն աշխարհի բազմաթիվ երկրներ իրենց տարբեր էթնիկական կազմով, ղեկավարվում էին հայերի կողմից: Ղեկավարելու համար հայերը պետք է ունենային խոր գիտելիքներ, շատ ավելի խոր, քան տվյալ էթնիկ խումբը, անձնական փորձ՝ կրթելու և տարածելու այն: Եվ այդ ամենը պետք է լիներ արդյունավետ, այլապես չէր ունենա գործընթացի արժեք:

XVIII դ. ֆրանսիացի գիտնական վանական դ’Վիլֆրուան համարում է, որ եթե Արևելքում կա ժողովուրդ, որն արժանի է հայտնի և ճանաչված լինելու՝ հայերն են, քանի որ ավելի քան 1000 տարի համարվել է Ասիայի Ակադեմիան:

Մեր նախնիներին դեռևս խոր անցյալում հայտնի էր, որ երկարակեցությանը օժանդակում են բնակավայրն ու կլիմայական պայմանները: Չի կարելի բնակվել սարի գագաթին, քանի որ ցուրտ է, և քամիներն ուժեղ են, այնտեղ ապրում են Աստվածները, ոչ էլ լեռան ստորոտում, որտեղ տոթ է, և գործում են չար ոգիները:

Նախընտրելին լեռների միջին մասն է՝ ծովի մակերևույթից 1000-1500 մ. բարձրության վրա: Որպես հնդեվրոպական ցեղ՝ հայերը միակն էին, որ մնացին իրենց նախահայրենիքում:

Հայկական լեռնաշխարհում բնակվում էին տարբեր լեզուներով այլ ցեղեր, սակայն հայերը և արմեններն ամենաձևավորված ուժեղ ցեղերն էին: Բացի հայերից և վրացիներից, մյուսները մեզ արմեններ էին անվանում: Հերոդոտոսը (VIդ. Ք.Ծ.ա.) գրում է, որ «արմեն» բառը հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքի Արմե և Ուրմե իշխանության տակ ապրող ցեղերն էին:

Պատմության մեջ ճանաչված է Փոքր (Արարատյան) և Մեծ Հայաստանը (մայրաքաղաքը՝ Արմավիր): I դ. Ք.Ծ.ա. Մեծ Հայաստանը հզոր, հելլենիստական գաղափարախոսության պետություն էր (մայրաքաղաքը՝ Արտաշատ): Այստեղ սկսեցին ձևավորվել քաղաքները, մշակութային կենտրոնները, բացվեցին առևտրական ճանապարհներ, հիմնադրվեց հայկական հելլենիստական թատրոնը: II դ. Ք.Ծ.ա., Արտաշես I-ի օրոք, հայ ժողովուրդը ստեղծում է իր առաջին միասնական պետականությունը: Ձևավորվում է ազգային կրոնափիլիսոփայությունը, քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, արվեստները ստանում են մասնակի և ձևավորված ինքնուրույնություն:

Առաջին հայկական պետականությունը (VI դ. մ.թ.ա.) ձևավորում է հեթանոսական դիցաբանությունը, առասպելները, վիպերգերը, որոնց հիմքում գերբնական աշխարհի ընկալումն էր:

Պատմության դիալեկտիկան հաստատում է այն ենթադրությունը, որ եթե գոյություն ունի որևէ երևույթի աստվածացում, այն իրականում եղել է: Օրինակ՝ Տիր աստվածը, որն Արամազդ աստծու դպիրն էր, եղել է արևի պաշտամունքի, գրականության և գրի, արվեստի հովանավորը: Եզրակացնենք, որ նման անհրաժեշտությունը եղել է, քանի որ Հին աշխարհում ունեցել են իրենց ազգային և՛ տառը, և՛ գիրը: Բազմաթիվ վարկածներ, վկայություններ հաստատում են այն փաստը, որ մինչև մաշտոցյան Հայոց գրերի ստեղծումը գործել են նշանագրեր, իսկ դա վկայում է, որ երկար դարեր հայոց լեզուն եղել է գրավոր:

Ֆրանսիացի լեզվաբան, արևելագետ Անտուան Մեյեն գիտականորեն ապացուցում է, որ հայոց հին լեզվում գործել են անգամ համակարգեր՝ հոլովում, խոնարհում, ածանցում:

Տրապիզունդում (Տրապիզոն քաղաքի հին անվանումը) Արևելքի իմաստուն Տյունիքոսի դպրոցում սովորում էր Անանիա Շիրակացին (VII դ.): Աշակերտի հետաքրքրությունների ոլորտը չափազանց մեծ էր՝ աշխարհագրությունից, մաթեմատիկայից, աստղաբաշխությունից զատ, նրան հետաքրքրում էին Հին աշխարհի ծածկագրերի, նշանագրերի բացատրությունները: Ուսուցչի պատասխանն իր տված հարցին զարմացրեց Շիրակացուն՝ *«ծածկագրերի հայրենիքը Հայաստանն է»,* - կարդում ենք Շիրակացու «Ինքնակենսագրությունում»:

*շարունակելի*

*Ծովինար Չալոյանի*
*«Գեղագիտության պատմություն» գրքից*
*Պատրաստեց* ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

## «Երաժիշտ» ամսաթերթի կարևորությունն արժևորած անվանի երաժիշտների մաղթանքները

5

*2005թ-ին Կոմիտասի անվ. ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սերգեյ Գեորգի Սարաջյանը թերթ ստեղծելու հրաշալի միտք հղացավ: Այդ միտքը կյանքի կոչեց «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր և գլխավոր խմբագիր, նաև նոտաների և գրքերի հրատարակություն իրականացնող «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-տնօրեն, երաժշտագետ Գոհար Կառլենի Շագոյանը: Եվ արդեն նույն տարվա դեկտեմբերին լույս տեսավ «Երաժիշտ» ամսաթերթի անդրանիկ համարը:*

*Դժվար է գերագնահատել այս երևույթի նշանակությունը: Առաջին անգամ, Հայաստանում, հնարավոր դարձավ շարունակաբար լուսաբանել Երևանի, հանրապետության և երբեմն՝ նաև մոտ ու հեռավոր արտերկրի երաժշտական կյանքը: Երաժշտագետներին, և որ հատկապես կարևոր է, երաժշտագետ-ուսանողներին ընձեռվեց տպագրական ասպարեզ, որի շնորհիվ էլ՝ արդեն սովորելու տարիներին իրենց մասնագիտության ոչ միայն գիտական, այլև հասարակական կոչումը ճանաչելու և հաղորդակից լինելու հնարավորություն:*

*Սերունդների համար էլ ամսաթերթը կդառնա ժամանակակից երաժշտական կյանքի ինքնատիպ տարեգրություն՝ ինքնին որպես փաստ հպարտություն, երբեմն էլ գուցե՝ ափսոսանք զգալու առիթ դառնալով:*

*Խորին շնորհակալություն ենք հայտնում «Երաժիշտ» ամսաթերթի խմբագրական կազմին, շնորհավորում ենք բոլորիս թերթի 5-ամյա հոբելյանի առթիվ և ցանկանում առավել լայն տարածում ու գրչի սրություն:*

**ԻՐԻՆԱ ԳԵՈՐԳԻ ՏԻԳՐԱՆՈՎԱ**
***արվեստագիտության թեկնածու, Կոմիտասի անվ. ԵՊԿ պրոֆեսոր, «ԵՊԿ հրատարակչության» խորհրդի անդամ***



Գոհար Շագոյան, Իրինա Տիգրանովա
2009 թ.

***Долгие годы создание такого органа печати было мечтой многих деятелей армянской музыкальной общественности, и сегодня мы имеем Издательство, которое получает высокую оценку своей деятельности не только в Армении, но и за ее пределами. Трудно переоценить значение музыкального печатного дела для развития армянской культуры. В “Издательстве ЕГК” создаются и печатаются различные образцы периодики: содержательный научно-теоретический, критико-публицистический журнал “Музыкальная Армения”, сборник научно-методических трудов, учебники, газета “Еражишт” (“Музыкант”) и многое другое. В их создании на протяжении ряда лет участвуют множество авторов, среди которых не только профессора и доктора наук, но и молодые преподаватели, аспиранты, порой даже студенты-магистранты. Ценно, что круг авторов нередко расширяется научными статьями иностранных ученых, наших соотечественников, живущих за рубежом. В изданиях находят отклик наиболее яркие, значимые события музыкально-общественной жизни республики. Благодаря этому, мы становимся свидетелями всех важных событий музыкальной жизни современного мира, знакомимся с жизнью и деятельностью выдающихся представителей музыкального искусства.***



*«ԵՊԿ հրատարակչության» բարեկամները, 2005 թ.
Սևան (սիրիահայ), Ս. Ազնաուրյան, Ա. Ավանեսով, Շուշանիկ Ափոյան, Վ. Թովմասյան, Հայր Լեւոն Զէքիեան, Գ. Շագոյան, Ա. Գևորգյան, Ս. Ղուկասյան*

***Помимо активной научно-просветительской деятельности издательство стимулирует композиторское творчество, издавая произведения современных армянских композиторов. Существование такого издательства открывает творческие возможности для активной научной и публицистической деятельности музыкантов разных специальностей - пианистов и вокалистов, струнников и дирижеров, и, конечно же, музыковедов.***

***Сердечно поздравляем небольшой коллектив преданных и опытных музыкантов - редакторов Издательства и основателя, главного редактора, издателя, стоявшего у истоков создания, патриота, знатока своего дела Гоар Карленовну Шагоян.***

**ШУШАНИК АРУТЮНОВНА АПОЯН**
*профессор, кандидат искусствоведения*

## ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ




Ծաղրանկարը՝
ՄԻՀՐԱՆ ՄԻՀՐԱՆՅԱՆԻ




Ծաղրանկարը՝
ՄԻՀՐԱՆ ՄԻՀՐԱՆՅԱՆԻ

Ծաղրանկարը՝ ՄԱՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ
ԵՊԿ դոցենտ



«Երաժիշտ» ամսաթերթում հետաքրքրական են տարբեր համարներում ընդգրկված երաժիշտների կատակ-հումորները՝ ծաղրանկարների և մանրապատումների տեսքով: Հրատարակվել են ԵՊԿ դոցենտ Մարի Մինասյանի, ԵՊԿ ուսանող, ծաղրանկարիչ Միհրան Միհրանյանի (Հալեպից է, 2006 թ. Երևանում ունեցել է իր ցուցահանդեսը, որի մասին լուսաբանվել է ամսաթերթի 6 (7) 2006 համարում), նկարիչ Գուրգեն Բալայանի ծաղրանկարներից (մեկնաբանումները այդ արվեստի կոմպոզիտորների նկարների շարժերի մասին ծաղրանկարչությանը վերաբերող արվեստաբանության թեկնածուի կոչման արժանացած Սաթենիկ Կանդայան-Մելիքյանի վերլուծական հոդվածը տե՛ս «Երաժշտական Հայաստան» 4 (23) 2006 թ.՝ նվիրված Առնո Բաբաջանյանին), Հովհաննես Դարբինյանի զավեշտական պատմությունները, ինչպես նաև ԵՊԿ պրոֆեսոր՝ Դանիել Երաժշտի մանրապատումները երաժիշտների և երաժշտության մասին:

### Դանիել Երաժշտի մանրապատումներից

Պրոֆեսորը նոր ստեղծագործության նոտաներ է առաջարկում ուսանողին և հարցնում.
«Թերթից լա՞վ ես կարդում»:
«Ոչինչ, բայց գրքից ավելի լավ եմ կարդում»:

* * *

Պատվիրան երիտասարդ դիրիժորին.
«Երգչուհիների հետ ընկերություն արա, բայց փայտիկը ձեռքիցդ մի գցիր»:

* * *

-Ո՞րն է համարվում սեփական միտք:
-Երկու մեջբերումների միջև ընկած «տարածությունը» կոչվում է սեփական միտք:

* * *

-Ի՞նչ արժե ջութակի ականջները:
-Չորս հազար ութ հարյուր դրամ:
-Աղջիկ ջան, իմ ականջներից թանկ են:
-Բայց ջութակի ականջները չորս հատ են...

* * *

Մի երգչուհու հարցազրույցից, որը հայերեն վարժ չէր խոսում:
- Ես հատկապես սիրում եմ երգել հայ անվանի, ժամանակավոր կոմպոզիտորների երգեր:

* * *

Կոնսերվատորիայում մի ուսանողուհի հարցրեց. «Չէիք ասի, որտեղ է գտնվում Օրգաննի պունկտը»:
Պարզվեց երգեհոնի դասարանն էր փնտրում:

* * *

Վալմարը նկարել էր Դանիել Երաժշտին: Երաժշտի կինն ուշադիր դիտում և ասում է. *«Ամեն ինչ լավ է, բայց աչքերը իսկ և իսկ Վալմարինն է»:*
*«Այդպես էլ պիտի լինի, պաշտպանվեց նկարիչը,* - Դանիել Երաժիշտը՝ Վալմարի աչքերով»:

* * *

Հիվանդ էի, ձայնս անճանաչելի էր, սակայն շտապ պետք է զանգահարեի պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյանին:
Զանգեցի.
-Ինչպե՞ս ճանաչեցիք ձայնս:
-Ես իմ լսողությունով ես տուն եմ պահում:

* * *

**«Երաժիշտները գլխից անպակաս են»**

Երգիծաբան Արամայիս Սահակյանի բնակարանի վերևի հարևանը դաշնակահար էր, և նա տեղափոխվեց մեկ այլ բնակարան, այստեղ էլ վերևի հարևանը... թավջութակահար էր: **«Չարիքի» փոքրագույնը:**

* * *

**Պատվախնդրություն**

Մոսկվայի կոնսերվատորիայում երևանցի մի դիմորդի հարցրել են.
-Ճի՞շտ է, որ ձեր դիրիժորներից Խանջյանը սիմֆոնիկ նվագախումբը չի ուզում ոչ մեկին տալ, նույնիսկ՝ իր սաներին:
-Այո, մաեստրոն միանգամայն ճիշտ է վարվում: Համաձայն Արևելքի ավանդույթի «կնոջը, ձիուն և նվագախմբին ոչ մեկին չեն տալիս»:

* * *

- Դանիել Երաժիշտ, «Շարական» անսամբլի համերգին նստատեղերի մի շարքը զբաղեցրել էին չինացի հյուրերը, արդյոք նրանք որևէ բան հասկանո՞ւմ են շարականներից, տաղերից...
- Իհարկե, չէ՞ որ չինացիների համար հայկական շարականները, տաղերը, ինչպես ասում են «չինական այբուբեն» է...

* * *

- «Շարական» անսամբլն արդեն բեմում էր, մինչդեռ դահլիճում աղմուկը չէր դադարում, և դիրիժորն ասաց. «Բարեկամներ, մենք ուշիուշով լսեցինք ձեր աղմուկը, այժմ խնդրում եմ լսել մեր երգը՝ Կոմիտասին...»



Դանիել Երաժշտի ծաղրանկարը
Նկարիչ՝ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԼԱՅԱՆ



Ծաղրանկարը
ՄԻՀՐԱՆ ՄԻՀՐԱՆՅԱՆԻ




*Պատրաստեց* **ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**



# Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվում

*1988 թվականից սկսած ԵՊԿ ուսանողները և դասախոսները ռեկտոր Էդգար Հովհաննիսյանի ղեկավարությամբ մասնակցել են Արցախյան շարժմանը: Այս տարվա՝ 2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմում անմասն չմնաց նաև կոնսերվատորիան. Հայրենիքի սահմանների և հայ ժողովրդի պաշտպանության համար մղած պայքարին մասնակցեցին նաև ԵՊԿ ուսանողներ, ավելի քան վաթսուն հոգի՝ ժամկետային ծառայողներ և բազմաթիվ կամավորականներ, կան շուրջ տասնյակ վիրավորներ, երեք անհայտ կորածներ, իսկ չորս ուսանողներ ցավոք զոհվեցին: Հավերժ փառք և խոնարհում մեր հերոսներին, ովքեր իրենց կյանքը տվեցին մեր այս օրվանը:*

***Խմբագրական***



*Տիգրան Սահակյան*



*Տիգրան Հարությունյան*



*Գոռ Թումանյան*



*Միեր Փոթոյան*

1 Տիգրան Սահակյանը սովորել է ԵՊԿ ժողովրդական նվագարանների և երգեցողության բաժնի առաջին կուրսում՝ պրոֆեսոր Սամվել Գալստյանի մասնագիտական դասարանում: Տիգրանը դեռ դպրոցական տարիներից ոգեշնչված էր Արցախյան առաջին ազատամարտի թեմայով և Հայ հերոսներին նվիրված երգերը եղել են նրա կյանքի ուղեկիցը: ԵՊԿ էր ընդունվել 2020 թ. և ավաղ բազմաթիվ երգեր մնացին այդպես էլ չկատարված:

Տիգրան Հարությունյանը ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի ժողովրդական երգեցողության ամբիոնի 2-րդ կուրսի ուսանող էր, սովորում էր Անահիտ Վալեսյանի մասնագիտական դասարանում: Նա ծառայում էր Խնձորեսկում, 9 ամսից պետք է վերադառնար տուն: Հոգատար էր, խելացի և չափազանց հայրենասեր: Չէր դադարում երգել ծառայության ընթացքում, և նրա անմահ ձայնը լսվում էր նույնիսկ մարտադաշտում:

Գոռ Թումանյանը ԵՊԿ ակադեմիական երգեցողություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող էր, սովորում էր պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի մասնագիտական դասարանում: Միջազգային բոլոր մրցույթներից մրցանակներով ու մեծ փառքով էր վերադառնում, փառքով պսակեց իր անունը նաև Արցախում: Գոռը երազում էր «Լա Սկալա» օպերայում ելույթ ունենալ, ու արդեն հրավերներ էր ստացել Իտալիայից: Գլխավոր շտաբը թույլ էր տվել, որ գնա: Ավաղ՝ չհասցրեց:

Միեր Փոթոյանը քամանչահար էր, ավարտել է ԵՊԿ ժողովրդական նվագարանների և երգեցողության բաժինը՝ պրոֆեսոր Նորայր Դավթյանի մասնագիտական դասարանը: Միերն արդեն հասցրել էր նվաճել բազմաթիվ բեմեր՝ ելույթ ունենալով «Սայաթ-Նովա» աշուղական անսամբլում և «Նարեկացի» նվագախմբում: Հանդես է եկել որպես մենակատար՝ ամենուր ներկայացնելով հայ երաժշտարվեստը: Ցավոք՝ չարաբաստիկ պատերազմը խլեց տաղանդավոր երաժշտի կյանքը, և նրա բազմաթիվ ծրագրեր մնացին անավարտ:

Հավերժ փառ՛ք մեր անմահ հերոսներին:

Ռազմաճակատում վիրավորում ստացած բոլոր հերոսներին, այդ թվում նաև ժամկետային և կամավոր ծառայողներ ԵՊԿ բակալավրականի ուսանողներին՝ Դերենիկ Նիկողոսյանին (փողային (գործիքների) բաժնի 1-ին կուրս), Անդրանիկ Վերդյանին (ակադեմիական երգեցողության բաժնի 2-րդ կուրս), Արման Շահինյանին (կամավոր, ժողովրդական նվագարանների և երգեցողության բաժնի 2-րդ կուրս), Էրիկ Մխիթարյանին (ակադեմիական երգեցողության բաժնի 2-րդ կուրս), Դավիթ Հովսեփյանին (կամավոր, ժողովրդական նվագարանների և երգեցողության բաժնի 3-րդ կուրս), Կարեն Շահինյանին (ժողովրդական նվագարանների և երգեցողության բաժնի 2-րդ կուրս) և դաշնամուրային բաժնի շրջանավարտ Արտյուշա Երզնկյանին, մաղթում ենք շուտափույտ ապաքինում և վերադարձ իրենց բնականոն ու ամենակարևորը խաղաղ կյանքին, իսկ անհայտ կորած՝ Գագիկ Խաչատուրյանին (մագիստրոսական կրթության ակադեմիական երգեցողության բաժնի 1-րդ կուրս) և ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղից՝ Երվանդ Գևորգյանը (ժող. երգեցողության բաժնի 1-ին կուրս), Հենրիկ Ասատրյան (ժող. երգեցողության բաժնի 1-ին կուրս), լիահույս սպասում ենք, որպեսզի Աստծո կամոք ողջ և առողջ վերադառնան իրենց ընտանիք:

***Խմբագրական***

## ԻՄ ԶԻՆՎՈՐ ԵՂԲԱՅՐ



*Հասմիկ Մկրտչյանը եղբոր՝ Վարազդատ Մկրտչյանի հետ*

Զինվոր հարազատ
Եղբայր թանկագին,
Սիրում եմ ես քեզ
Իմ գանձ, իմ անգին:
Մենք հոգով լեցուն
Տառապանք կրած,
Տանջանքներով լի
Կյանքով լցվեցինք:
Իսկ դու կռվեցիր
Հանուն մեր ազգի,
Արյունով ներկված
Հայրենի հողի:
Հպարտ ենք քեզնով
Իմ արի առյուծ,
Իմ հերոս, իմ կյանք,
Իմ թանկ արեգակ:
Դու իմ զինվորն ես
Կարոտել եմ քեզ,
Դ՛ե վերադարձիր,
Մայրդ սպասում է
Ու կարոտում քեզ,
Հանկարծ չտխրես
Ու չվրդովվես:
Չէ որ հեռվում քեզ
Շատ սպասող ունես:
Հպարտ եմ քեզնով,
Որ իմ եղբայրն ես,
Մեր տան ճրագն ես,
Իմ Հայրենիքն ես,
Իմ երազած
հայրենի տունն ես,
Իմ միակ անգին,
Իմ մինուճարն ես:
Դավաճանները թողեցին մենակ,
Ու փախան վախկոտ նապաստակի պես:
Դավաճաններին կապ տվիր հանկարծ,
Որ վիրավոր ես,
Ընկերդ նույնպես,
Մյուս ընկերդ էլ
Ավա՜ղ զոհվել էր:
Բայց դավաճանները քեզ չլսեցին,
Փախան կեղտոտ առնետի նման,
Ու արնաքամ ոտքդ վիրավոր
Մնացիր ընկած դիրքում մենավոր:
Թշնամին մտավ դիրքդ արյունոտ,
Քեզ գերեվարեց ու տարավ հեռու:
Շա՜տ հեռու մեզնից...
Ես հավատում եմ
Օրը գալու է,
Դավաճանները պատժվելու են:
Աստված պահապան
Քեզ իմ լավ զինվոր,
Մենք սպասում ենք,
Դ՛ե վերադարձիր:
Աստված է վկա,
Իմ զինվոր եղբայրը
Շուտով տուն կգա:

**ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ**
***Արմավիրի քաղաքապետարանի երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնի 7-րդ դասարանի աշակերտ, 17 տարեկան***

## ԱՐՑԱԽ

Հանուն սիրո երդվում եմ քեզ,
Իմ հայրենիք ոսկեշող,
Հենց այս պահին թեժ մարտերում,
Կլինեմ քաջ ու հաղթող:
Կմարտնչեմ որ հավիտյան,
Քո դաշտերը կանաչեն,
Երջանկության մի անսահման
Երգիչները խաղ կանչեն:
Գրոհ կտամ իմ Հայրենիք,
Որ հավիտյան դու շողաս,
Քաղաքներով քո գեղեցիկ
Դեպի երկինք խոյանաս:
Եթե ընկնեմ կռվի դաշտում,
Գիտեմ կապրեմ կենդանի,
Քանի որ կաս վեհ ու խնդուն,
Անհաղթ երկիր հայրենի:

## ՂԱՐԱԲԱՂ

Ղարաբաղ մայր մեր Սիրելի,
Քս որդիներն են քաջ ու արի,
Քո թշնամուն ոխերիմ,
Ոչ մի անգամ չենք ների:
Կմարտնչենք քեզ համար,
Ինչպես կայծակ ու մրրիկ,
Ղարաբաղ մեր մայր Հայրենիք
Ղարաբաղ մեր հարազատ:
Դու կլինես միշտ ազատ,
Չենք թողնի, որ թշնամին
Ոտքը դնի քո շեմին:
Կմարտնչենք մեր զենքով,
Քեզ կփրկենք սխրանքով:

**ԼԱՉԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ**
***Հայկական բանակի պահեստի սպա՝ մայոր, ԵՊԿ փականագործ, հետախույզ***

## ВОЙНА

Опять война - и убивают.
Герои заживо сгорают,
Предатели бегут тайком.
Течёт рекою кровь из раны,
Солдаты все на поле брани,
И умирают под огнём.
За Родину, Свободу, Правду!
Улыбку нежности и Маму!
И во отмщение врагу!
Не будет радости коварству,
Сгорит в огне. Да будет счастье!
Очистится земля от скверны,
И солнце воссияет в бездне,
И светом полнится Душа!
Да будет так, друзья, навеки,
Жизнь продолжается на свете,
Восславим верность Небесам!

**АРКАДИЙ МАРТИРОСЯН**
***оперный певец***

# Իրանահայ երաժիշտները «Երաժիշտ»8(21)2007թ.

Հետևողականորեն լուսաբանվում են Սփյուռքի երաժիշտների, նրանց գործունեության և տարբեր միջոցառումների մասին: Ամսաթերթի 8 (21) 2007 համարում առաջին գլխավոր խմբագիր Աննա Գևորգյանի շնորհիվ ամբողջությամբ արտացոլվեց Իրանի՝ հիմնականում Թեհրանի հայկական գաղթօջախի երաժշտական կյանքն ըստ երաժիշտ գործիչների ստեղծագործական գործունեության և անցած կյանքի: Նրանք ունեն դաշնամուրային լավ դպրոց, եվրոպական կրթություն ստացած մասնագետներ, որոնցից շատերը սովորել են նաև Երևանի պետական կոնսերվատորիայում Սվետլանա Նավասարդյանի դասարանում:

***խմբագրական***

2005 թվականից սկսած տողերիս հեղինակը տարբեր առիթներով հրավիրվել է Իրանի Իսլամական Հանրապետություն: Յուրաքանչյուր այցելության ժամանակ հանդիպել իրանահայ մտավորականների, որոնց հետ ծանոթությունը հոգեհարազատության պահեր է պարգևել: 2007թ-ի հունիսի 27-ին Թեհրանի «Սուրե» համալսարանի ղեկավարության հրավերով դասախոսություններ կարդացի «երաժշտական ձև» առարկայից: Տպավորություններս թե՛ համալսարանից, և թե՛ ուսանողներից դրական են: Անձամբ ճանաչելով իրանահայ անվանի դաշնակահար Ռաֆայել Մնացականյանին ու կոմպոզիտոր Վարդան Սահակյանին և տեսնելով, թե ինչ հսկայական, ազգանվեր աշխատանք են կատարում երաժշտության բնագավառում, հարկ համարեցի մոտիկից ծանոթանալու և ներկայացնելու իրանահայ երաժիշտների գործունեությունը: Այդ նպատակով, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիրներ՝ ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Ս.Գ.Սարաջյանի, «ԵՊԿ հրատարակչության» տնօրեն, գլխավոր խմբագիր Գ.Կ.Շագոյանի և Ա.Վ.Գևորգյանի որոշմամբ թերթի հերթական համարը նվիրվում է իրանահայ երաժիշտների գործունեությանը:

Կոնսերվատորիայի տնօրինության ցանկությունն է՝ կապեր ստեղծել սփյուռքահայ գաղթօջախների հետ և այս նախաձեռնությունն այդ ուղղությամբ կատարված առաջին փորձն է:

Բարեպատեհ առիթով հյուրընկալվեցի իրանահայ երաժշտագետ-արվեստաբան Լիդա Բերբերյանի տանը, որը հանգամանորեն ներկայացրեց Իրանի երաժշտական կյանքը: Այս նախաձեռնության իրագործումը հաջողությամբ չէր ավարտվի, եթե չլիներ նրա հետևողական աջակցությունը:

Ցավոք, չհաջողվեց բոլորին հանդիպել, և այն երաժիշտները, որոնց ներկայացրել ենք, բայց անձամբ չենք հանդիպել, մեջբերել ենք Թեհրանում լույս տեսնող հայկական մամուլի բնութագրումները: Ծրագիրը հաջողությամբ չէր իրագործվի, եթե չլիներ «Ալիք» օրաթերթի աջակցությունը:

Երաժշտագետ Գոհար Շագոյանը, ԵՊԿ դասախոս Աննա Գևորգյանը և «ԵՊԿ հրատարակչության» աշխատակազմը առանձնահատուկ շնորհակալություն են հայտնում «Ալիք» օրաթերթի աշխատակիցներ՝ տիկին Բեյսի Հովհաննիսյանին և Արմինե Էլիասյանին, նաև՝ ամբողջ աշխատակազմին:

**ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

***տե՛ս «Երաժիշտ» #8(21) օգոստոս, 2007***

1



Դաշնակահար, կոմպոզիտոր ԷՄՄԱՆՈՒԵԼ ՄԵԼԻՔ-ԱՍԼԱՆՅԱՆ



ՌԱՖԱՅԵԼ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ (դաշնակահար)



ԼԻԴԱ ԲԵՐԲԵՐՅԱՆ



ՇԱՔԵ ՄԱԿԱՐՅԱՆ (ՎԱՐԴԱՆՅԱՆ)



ՏԻԳՐԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Խմբավար



ՎԱՐԴԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

### Երաժշտությանը նվիրյալ քույրերը



ՀԱՅՆՈՒՇ ՄԱԿԱՐՅԱՆ



ՀՐԱՉՈՒՀԻ ՄԱԿԱՐՅԱՆ

### Տաղանդաշատ ընտանիքի զավակները.



ԳԱԳԻԿ ԲԱԲԱՅԱՆ






ԽԱՉԻԿ ԲԱԲԱՅԱՆ
*(ջութակահար)*

ԶԱՐՄԻԿ ԲԱԲԱՅԱՆ
*(դաշնակահար)*

### Իրանահայ երաժիշտների կրտսեր սերունդը



ՌԵԲԵԿԱ ԱՇՈՒՂՅԱՆ

«ԵՊԿ հրատարակչության» «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր, երաժշտագետ, իրանցիներին պարսկերենով դասավանդող տեսական դասընթացների ԵՊԿ դասախոս Աննա Գևորգյանը շատ մեծ դժվարություններով, երկու տարվա ամառային իր արձակուրդները անցկացրեց Իրանում գործուղվելով և մասնակցելով վարպետության դասերի և Իրանի համալսարաններում գիտաժողովների զուգահեռաբար հավաքագրելով նյութեր հետագայում նշված ամսաթերթի իրանահայ երաժիշտ գործիչների մասին հոդվածների համար: Շատ դժվար էր տեխնիկապես իրագործելու այս աշխատանքը և մինչև օրս չենք կարողանում այս աշխատելաոճը շարունակել մնացած գաղթօջախների գործիչների աշխատանքը լուսաբանելու համար նվիրելու նրանց մեկ ամբողջական ամսաթերթ: Փորձեր կատարել ենք բեյրութահայ, ամերիկահայ մշակութային օջախները ներկայացնելու, սակայն ոչ ամբողջական թերթով:

«ԵՊԿ հրատարակչության» աշխատակազմը առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում Աննա Գևորգյանին, այժմ բնակվող Ստամբուլում «Երաժիշտ» 8(21) օգոստոս, 2007 ամսաթերթի համարն իրականացնելու համար:

***Խմբագրական***

# «Երաժիշտ» ամսաթերթը 15 տարեկան է

7

***творческого общения с такими видными деятелями армянского искусства, как Эдвард Мирзоян, Гия Канчели, Владилен Бальян, Шушаник Апоян, Ваагн Стамболцян, Армине Григорян, Карэн Шахгалдян"* – Ирина Карумян, переводчик, член СП Армении.**

Եվա Կոչիկյանը 2004-2008 թթ. աշխատել է որպես ռուսերեն տեքստերի խմբագիր, երաժշտագետ է, ավարտած Իրինա Տիգրանովայի դասարանը:

Կարճաժամկետ՝ 2008-2009 թթ. աշխատել է որպես ռուսերեն տեքստերի խմբագիր երաժշտագետ է, Ա. Բաբաջանյան երաժշտամանակավարժական քոլեջի դասախոս Հռիփսիմե Մկրտչյանը:

Երաժշտագետ, Ա. Բաբաջանյան երաժշտամանակավարժական քոլեջի դասախոս Մարգարիտա Կիրակոսյանը 2010-2012 թթ. աշխատել է հրատարակչությունում ռուսերեն տեքստերի խմբագիր-թարգմանիչ և եղել է հեղինակ գիտական լուրջ աշխատություն-հոդվածների:



*Քիստափոր Փախանյան («Երաժշտական Հայաստան», «ԵՊԿ հրատարակչության» և «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր-դիզայներ), Ս. Ազնաուրյան, Գ. Շագոյան*



*Հովհաննես Մուրադյան «ԵՊԿ հրատարակչությունում», լուսանկ.՝ Գ. Շագոյանի, 2016 թ.*

Մարիամ Ասատրյանը 2006-2011 թթ. աշխատել է նոտային տեքստերի խմբագիր և ԵՊԿ-ում՝ ինֆորմատիկայի դասախոս: Իր երաժշտագիտական մասնագիտական գիտելիքներով կայացել է նաև Իտալիայում, որտեղ և գործուղվել է սովորելու, և այժմ էլ բնակվում է այնտեղ:Իր հետաքրքիր ժամանակակից երաժշտագիտական մտածելակերպի հոդվածներն ուղարկում է հրատարակչություն տպագրման:

*Շնորհիվ Իրինա Տիգրանովայի, Գոհար Շագոյանի ղեկավարությամբ «ԵՊԿ հրատարակչությունը» ձեռք բերեց բարեկամներ հանձինս՝ Թումանյան 40 հասցեում տեղակայված երևանյան մտավորականությանը քաջ հայտնի «Ակումբի» տնօրինությանը: Նրանք շարունակաբար շուրջ 15 տարի հյուրընկալ դահլիճները հրատարակչության շնորհանդեսներին, միջոցառումներին, հատկապես Ա. Տերտերյանին նվիրված, քանի որ նրա արվեստի երկրպագուներն են:*



*Հասմիկ Համբարյան «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր, ԵՊԿ դասախոսներ՝ Կարինե Բրուտյան, Նարինե Զարիֆյան, հյուրեր գործարար տեր և տիկին Խորեն և Աննա Քոթանջյաններ, պրոֆեսոր Իրինա Տիգրանովա, Գոհար Շագոյան (կազմակերպիչ, «ԵՊԿ հրատարակչության» տնօրեն) , Վալենտին Թովմասյան («ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, դոցենտ), Ծովակ Ավագյան (կենսաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն հարսի և թոռնիկի հետ), Սարգիս Հովհաննիսյան (ԵՊԿ դասախոս, արվեստագիտության թեկնածու, այժմ նոտային տեքստերի խմբագիր), կոմպոզիտոր՝ Միխայիլ Կոկժաև, երաժշտագետ՝ Շուշան Հյուսնունց*

***Տարիներ շարունակ Երևանյան հայտնի Թումանյան 40 «Ակումբ»-ի հյուրընկալ ղեկավարությունն իրենց սրահները տրամադրել են ԵՊԿ հրատարակչությանը շնորհանդեսներ և հանդիպումներ անցկացնելու համար, դրանք պարբերական բնույթ են կրել, Ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանության հիշատակին օրը և նաև Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի տոնին զուգադիպած, «ԵՊԿ հրատարակչության» հիմնադրման օրը 24 ապրիլի 2010 թ.***

Հրանտ Խաչիկյանը գիտական հետաքրքրական հոդվածներով առ այսօր մասնակցում է երաժշտական մասնագիտական մամուլի հրատարակչական աշխատանքներին: Նա արվեստաբանության բնագավառին և երգչական արվեստին վերաբերող ուսումնամեթոդական հոդվածներով աշխատել է հրատարակչությունում որպես թարգմանիչ, խմբագիր, ԵՊԿ-ում որպես երգիչ, մեթոդաբան: Այժմ նա բնակվում է Շվեյցարիայում, որտեղ տեղափոխվեց 2012-ից և «Երաժշտական Հայաստան» գիտական ամսագրի նաև նորաստեղծ ՀԿՄ-ի «Հայ կոմպոզիտոր» ամսագրի միջազգային խմբագրական խորհուրդների անդամ է, այսինքն շարունակվում են համագործակցությունները: Հրանտ Խաչիկյանը աշխատել է հրատարակչությունում՝ որպես անգլերենի, ֆրանսերենի թարգմանիչ խմբագիր՝ 2005-2011 թվականները, իր ներկայությամբ բարձր արժեհամակարգի հետևող և ունեցող բարեկիրթ գիտնականի աշխատանք ցուցաբերելով պատասխանատվության և ազնվության «զանգն էր ղողանջում» օրինակ դառնալով թե՛ հեղինակների և թե՛ աշխատակիցների համար:



*Հյուրեր Շվեդիայի Երգի միջազգային կոնգրեսի նախագահի և Կ. Գևորգյան-Հելլմանի հետ Գ. Շագոյանի այցելությունը ՀԵԸ նախագահ՝ Դավիթ Ղազարյանին*

Վալենտին Խաչիկի Թովմասյան. ծնվել է (17.12.1937-27.12.2017 թթ., ք. Երևան): Նա ավարտել է՝ 1958 թ. Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի փողային բաժնի շեփորի դասարանը (ղեկ.՝ Աշոտ Կարապետյան), 1967-ին ԵՊԿ նվագախմբային ֆակուլտետի փողային ամբիոնի շեփորի դասարանը (ղեկ.՝ Միքայել Խաչատրյան): Նա աշխատել է՝ 1962-1967 թթ. Երևանի «Նաիրի» կինոթատրոնի ջազ նվագախմբում, ապա՝ «Երևան» փողային նվագախմբում՝ որպես շեփորահար: Մասնակցել է շուրջ 100 համերգի: 1967-1977 թթ. աշխատել է ՀՍՍՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի սիմֆոնիկ նվագախմբում՝ որպես շեփորահար: Նվագախմբի կազմում բազմաթիվ ձայնագրություններ է կատարել և մասնակցել ավելի քան 200 համերգի: 1977-2006 թթ. աշխատել է Հայաստանի հանրային ռադիոյի երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրության երաժշտական մեկնաբան, ավագ խմբագիր: Վ. Թովմասյանը հեղինակ է՝ ավելի քան 4000 ռադիոծրագրերի, ինչպես նաև 120 հաղորդումների Մոսկվայի «Օստանկինո» և 250 ռադիոծրագրերի «ՎԷՄ» ռադիոկայաններում: 2000-2017 թթ. աշխատել է «Երաժշտական Հայաստան» գիտատեսական, քննադատական-հրապարակախոսական երաժշտական ամսագրում՝ որպես պատասխանատու քարտուղար, 2004-2012 թթ. որպես «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, մինչև 2017-ը՝ խմբագիր, «Երաժիշտ» ամսաթերթի և ուսումնամեթոդական աշխատությունների ժողովածուի խմբագիր:

Վ. Թովմասյանը դասավանդել է՝ 1978 -1989 թթ. Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտում «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա», 1992-2017 թթ. ԵՊԿ-ում «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա»: Նա խմբագրի և երաժշտագիտական գործունեությունը վառ է՝ 2011 թ. Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտում պաշտպանել է «Նվագախմբային փողային գործիքները և դրանց

16

**«Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակին**

15 տարի առաջ, ԵՊԿ նախկին ռեկտոր, հիանալի դաշնակահար, տաղանդավոր մանկավարժ, պրոֆեսոր Սերգեյ Սարաջյանը և երաժշտագետ, իր գործի գիտակ Գոհար Շագոյանը հիմնեցին Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի «Երաժիշտ» պաշտոնաթերթը, որը հանրապետական, երաժշտական, մշակութային, տեղեկատվական միակ ամսաթերթն է:

Այս տարիների ընթացքում փոխվել են թերթի խմբագիրները, բայց պարբերականը հարազատ մնալով իր առաքելությանը, մշտական իր ուշադրության կենտրոնում է պահում մեր երկրում, Սփյուռքում և աշխարհում կատարվող երաժշտամշակութային իրադարձությունները՝ ձեռքը մշտական պահելով արվեստի զարկերակին՝ լուսաբանելով մրցույթներ, փառատոներ, գիտական կոնֆերանսներ, նշանավոր տարեթվեր և հոբելյաններ:

Թերթն անդրադառնում է կոնսերվատորիայի բուհական կյանքին, կարևոր իրադարձություններին, հանրապետությունում ելույթ ունեցող ինչպես հայ, այնպես էլ օտարազգի երաժիշտների ելույթներին, նրանց հանդիպումներին մեր բուհի ուսանողության հետ, վարպետաց դասերին:

Չնայած այն հանգամանքին, որ «Երաժիշտ» ամսաթերթը շատ ընդգրկուն է և արդիական:

Իհարկե, ցանկալի է, որ այն հրատարակվի պարբերաբար և հանդիսանա ոչ միայն տեղեկատվական, այլև բարձրացնի լուրջ, մեր երաժշտական միջավայրին հետաքրքրող և անհանգստացնող պրոբլեմատիկ հարցադրումներ:

Սրտանց շնորհավորում եմ «Երաժիշտ» ամսաթերթի ստեղծագործական փոքրաթիվ կազմին տասնհինգամյա տարեդարձի առթիվ, ցանկանալով ընթերցել անաչառ, օբյեկտիվ և պրոֆեսիոնալ հոդվածներ:

*ԵՊԿ պրոֆեսոր, ՀԵԸ նախագահ,*
*Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանակիր*
**ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ**

*В связи с юбилеями журнала "Музыкальная Армения", "Издательства ЕГК" и газеты "Еражишт" примите мои сердечные поздравления.*

*Я человек для музыки не сторонний. Я поэт, писатель, а поэт и поет – это почти одно и то же. Кроме того, мой прадед был священником в Шуши, и то, что род дал потом еще и поэта, писателя, закономерно. А дед был уже известным композитором и руководителем армянского хора в Ростове-на-Дону в самом начале XX века. Его знаменитую песню «Ми лар блбул» пела Айкануш Даниелян. Мои эссе о музыке (если их собрать вместе) – это уже целая книга: Саят-Нова, Комитас, Спендиаров, Арам Хачатурян, Татул Алтунян, Арно Бабаджанян, Шарль Азнавур, Зара Долуханова, эссе о дудуке, дхоле, виолино, Бахе, Глюке, Моцарте, Бетховене, Шопене, Чайковском, о Клавдии Шульженко, Булате Окуджаве, Алле Пугачевой, о песнях «Киликия» и древней армянской колыбельной, о цикле песен времён Великой Отечественной войны, о символических фигурах Орфея и Аполлона и т.д. Словом, целый пласт моего творчества – это раздумья о музыке. Задумывалась я и о том, как нам как народу распорядиться песнями Арно Бабаджаняна. Самые выдающиеся нужно собрать в сюиту, и это будет баснословная сюита, намного превосходящая музыкальностью и напевностью более скромную сюиту из произведений Нино Рота, надо только найти аранжировщика уровня Жоржа Гарваренца. И тогда скудеющий мировой симфонический ряд получит новую жемчужину. Эта сюита обойдет весь земной шар.*

*Вам, как изданию, надо расширяться. Когда смягчится коронавирус, подумайте об этом. Армянам, как народу, безусловно, музыкально очень одаренному, надо больше писать об этой стороне нашей натуры. Я много думала об окрасе армянской музыкальности. В одном только XX веке композиторов – и выдающихся, и более скромных (а это целая россыпь) – длинный ряд имен. Мы поставщики музыкального материала очень мелодичного, а такое с удовольствием подхватывается всеми. Армяне – народ сущностных свойств, чего-то основополагающего, внутреннего, сдержанного, непоказного, аскетичного, что не исключает артистизма. Таковы все наши проявления, в частности танцы, целомудренные в своей основе. Восприятие телесности армянского ландшафта, внятность, фактурность армянского мира, армянского духа ощущаются очень явственно. Некоторая скованность – да, зато сохранена линия. Некая строгая сила, некая упорядоченность. Никакой схематичности, этюдности. Таков и армянский характер. Армения – это сдержанный Восток. Армянам свойствен пластичный, имитационный, мгновенно схватывающий нюансы дух. Примеры? Среднеазиатские мелизмы у Андрея Бабаева и «русскость» песен Александра Долуханяна.*

*Просторной и расширяющейся вам дороги. С наилучшими пожеланиями*

***НЕЛЛИ ВАРТАНОВНА СААКЯН.***
***11.07.2020***

## «Երաժիշտ» ամսաթերթը 15 տարեկան է

15

կատարողականությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Գիտական բազմաթիվ գրախոսականների հեղինակ է, հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հեղինակ է՝ աշխատությունների՝ «Կյանքի ուրվագիծ. Միքայել Խաչատրյան», 2004 թ., «Փողային և հարվածային գործիքներ», 2011 թ., «Փայտյա և պղնձյա փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն», 2014 թ., «Փայտյա և պղնձյա փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա», 2014 թ.: Նրա գիտական, վերլուծական, քննադատական և հրապարակախոսական ավելի քան 1000 հոդված է տպագրել «Սովետական Հայաստան», «Սովետական արվեստ», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ», «Հայրենիքի ձայն», «Գեղարվեստ», «Ուրբաթ», «Եթերում է Երևանը», «Եթեր», «TV Channel», «Ալիք», «Արարատ», «Երաժիշտ», «Զրուցակից»,«Երաժշտական Հայաստան», “Музыкальная академия” (Մոսկվա), «Գրականութեան և Արուեստներու» և «Շիրակ» (Հալեպ) պարբերականներում և ամսագրերում: 2015 թվականից Հայաստանի կոմպոզիտորների նաև շուրջ 40 տարի ՀՀ ժուռնալիստների և Թատերական գործիչների միությունների անդամ:

Տարիներ են անցնում և թվում է, թե մեր սիրելիները մեզ հետ միշտ են լինելու, թե ամեն օր աշխատավայրում միմյանց տեսնելու, հաճելի ներկայությունը վայելելու ենք: Ու հանգիստ լինելու, որ նրանք մեր առօրյայում են ու մեր կողքին, նույնիսկ թոշակավորվելուց հետո պարոն Հովհաննեսը շարունակում էր մեր աշխատանքներին աջակցել խորհուրդներով, ուղղել, սրբագրել: Այո սրբագրում էր բառիս բուն և լայն փոխաբերական իմաստով: Հարազատ իր արմատներին, լեզվին, ոսկեղենիկ հայերենին: Տիրապետում էր կատարյալ՝ թե՛ արևելահայերենին, և՛ թե արևմտահայերենին, իսկ գրաբարին վերաբերում էր խոնարհությամբ ու մեծարանքով, որն այնքան գեղեցիկ և հզոր է, որ միայն աղոթել կարելի է: Հարգարժան, իսկ իր համար կային որդիական սիրով լցված հոգևորականներ և մի առիթով նույնիսկ Արք. Նավասարդ սրբազանին ասաց. *«եթե ես որդի ունենայի կուզենայի Դուք լինեիք»:*

«Երաժիշտ» ամսաթերթի բարեկամները.

Ծովակ Ավագյան. Իգդիր-Սուրմալու հայրենակցական միության նախագահության անդամ էր և այդտեղ մտերմացանք համանուն գրքի շնորհանդեսին և դարձանք հոգեհարազատ հայրենակիցներ, այնուհետև նաև հրատարակչության բարեկամը: Նա Կենսաֆիզիկայի ինստիտուտի տնօրենն էր և այդ գծով միջազգային ասոցիացիայի անդամակցած, ով ներկայացնում էր Հայաստանը: Չքնաղ բարեկիրթ անձնավորություն և երաժշտասեր մտավորական, ով իր հոդվածներով Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի, Շառլ Ազնավուրի մասին իր մասնակցությունը բերեց ամսագրին ու ամսաթերթին:

Յուրի Յուզբաշյան. հրատարակչության բարեկամ՝ սկսած 1998 թվականից «Երաժշտական Հայաստան բարեկամների ակումբի» ժամանակվանից, որ 8 հանդիպումներ տեղի ունեցան՝ ամսագիրը գործում էր բանավոր: Եվ պարոն Յուզբաշյանը իր ներկայությամբ մշտական մասնակիցներից մեկն էր, այնուհետև այդ գործընթացը շարունակվեց՝ բերելով իր մասնակցությունը «ԵՊԿ հրատարակչության» կայացման և զարգացման՝ և՛ ամսաթերթի, և՛ ամսագրի: Նա մշտապես մասնակից է եղել և՛ իր խոսքով, և՛ շնորհավորանքներով գոտեպնդել խմբագիրներին իրենց դժվար, սակայն պատվաբեր աշխատանքում:


Ծովակ Ավագյան, երաժիշտների հուշատախտակը ՀՀ ֆիզիկայի ինստիտուտում, (լուսանկ.՝ Գ. Շ.)


Պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Յուրի Վաղարշակի Յուզբաշյան


*Հովհաննես Մուրադյան, Գոհար Շագոյան, Աննա Բարսամյան, Հրանտ Խաչիկյան Նոր Տարի, 2009 թ.*

Գ.Կ.ՇԱԳՈՅԱՆ
*«Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր, թողարկման պատասխանատու, երաժշտագետ*



## Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

### Издано в Степанакерте: в дар библиотеке и “Издательству ЕГК”

1

**В этом году библиотеке Ереванской государственной консерватории имени Комитаса была подарена книга “Музыкальная культура – страницы истории”, изданная при содействии Министерства культуры и по вопросам молодежи НКР в Степанакерте в 2017 году. Автор издания – Нина Владимировна Акопян, редактор – Нелли Федоровна Аветисян.**




***Н. Акопян родилась в 1969 году в г. Ханларе. В 1988 г. с отличием окончила Степанакертское музыкальное училище им. Саят–Новы по специальности “Теория музыки”. В 1993 г. окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса (отделение “Музыковедение” ). Более двадцати лет преподаватель теоретических дисциплин в Степанакертском музыкальном колледже им. Саят–Новы. В 2012 г. при содействии Министерства Культуры и по вопросам молодежи НКР издала учебно–методическое пособие по сольфеджио “Музыкальные диктанты”. В 2013 г. участвовала в Международной научной конференции “Арам Хачатурян и современный мир” (к 110–летнему юбилею). В 2014 г. приняла участие в состоявшемся в г. Гюмри в рамках Международного конкурса–фестиваля “Возрождение” (“Верацнунд”) в Международном научном форуме “Мировая культура и Армения – “ Диалог культур”. Публикует статьи на профессиональные и общественные темы на страницах Республиканской газеты “Азат Арцах”. Принимает активное участие в жизни музыкального колледжа: проводит теоретические викторины, читает доклады, выступает на Арцахском телевидении.***

**В книге впервые опубликованы музыковедческие статьи, исследующие вокальное творчество композиторов Арцаха, относящееся к концу XX века, а также произведения композиторов других стран. Первый раздел книги предназначается профессиональным музыкантам. Материалы исследований могут найти применение в учебном курсе музыкальной литературы в музыкальных училищах. Статьи из второго раздела, освещающие творчество видных армянских деятелей культуры, а также культурную жизнь Республики Арцах последних лет, адресованы широкому кругу музыкантов–профессионалов и любителей музыки.**

**В 2017 году в Степанакерте вышла в свет книга Нины Акопян “Эдуард Ервандович Газаров”, посвященная 80–летию композитора. Книга издана по заказу Министерства культуры и по вопросам молодежи НКР, редактор – Нелли Аветисян.**

**Монография посвящена выдающемуся армянскому композитору Эдуарду Ервандовичу Газарову. Имя легендарного музыканта известно далеко за пределами его исторической родины – Арцаха и глубоко почитается всеми, кто хоть раз слушал его виртуозное исполнение на аккордеоне, или соприкоснулся с его творчеством и тем более теми, кому посчастливилось лично общаться с композитором – ярчайшей, незаурядной личностью.**




**Впервые широко представлена его разносторонняя деятельность как блестящего педагога и исполнителя, прекрасного организатора учебного процесса в музыкальных образовательных учреждениях, активного общественного деятеля. Книга состоит из двух глав: 1. Художественное формирование музыканта. Концертная и педагогическая деятельность; 2. Творческая и общественная деятельность 1980–90 годов. Слово современников и коллег о Газарове.**

**Издание предназначается музыкантам–профессионалам, а также широкому кругу читателей.**

**Профессорско–преподавательский состав и студенты консерватории приносят благодарность автору книг Нине Акопян в трудное для Арцаха и Армении время за предоставленную литературу, которая несомненно обогатит фонды библиотеки.**

Նինա Հակոբյանի «Երաժշտական թելադրություններ» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակվել է Ստեփանակերտում, 2012 թ., ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ: Այն կազմված է հայտնի երաժիշտների, տեսաբանների թելադրություններից, ինչպես նաև Կոմիտասի Ազգագրական ժողովածուի երգերից: Ժողովածուի ստեղծումը պայմանավորված է ազգային երաժշտության հանդեպ աճող հետաքրքրությամբ և «սոլֆեջո» առարկայից թելադրությունների ցանկի բազմազանությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Ընդգրկված են միաձայն և երկձայն տարբեր բարդության թելադրությունների օրինակներ: Գրքի նախաբանում հեղինակը նշել է. *«Սույն ժողովածուն կազմվել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական ուսումնարանում՝ սոլֆեջոյի դասավանդման փորձի հիման վրա: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտություն էր առաջանում օգտագործել մի քանի ձեռնարկ ուսումնական նյութի հայեցողական ընտրությամբ՝ ելնելով ուսանողների պատրաստության մակարդակից: Ժողովածուն բաղկացած է տարբեր հեղինակների՝ մասնագիտական ուսումնառության տեսակետից, առավել նպատակային օրինակներից և ներառում է նմուշներ նաև գեղարվեստական գրականությունից»:*




Ժողովածուն նախատեսված է երաժշտական ուսումնարանների տարբեր բաժինների ուսանողների ուսուցման ամբողջ դասընթացի համար:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս.)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 16 էջ: Ստորագրված է 26.12.2020:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

0001, ք. Երևան, Սարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/

